



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material









ԱՊՐԵԼԸՆ ԴԵՍԻԵՐԸՆՈՒԹՅՈՒՆ ԳԼԽԵՎՈՐ ԱՐՔՈՒԹՅՈՒՆ
№ 23 ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵՐԻԱ № 23

Պրոֆ. Պ. ՑՈՒ. ՇՄԻԴՏ

59 (09)

ՀԱՅԱՍՏԱՆ Հ. 1931 թ.

ՀԵՐ ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՆ Ի ՆՐԱՆՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԹՐԱԿ ՅԵՐԿՐՈՐԴ

Ա. Ա. Յախոնտովի ընդհանուր խմբագրությամբ

Թարգմ. Խ. ԿՈՆԹՅՈՒՆ

A 13012



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1930

Պետական ուսումնական խորհրդի
գիտական-մտնկավարժական սեկ-
ցիայի կողմից բույլատրված և II
աստիճանի դպրոցների համար

Հրատ. № 1175

Գրառ. № 2983 (բ.)

Պատ. № 227.

Տիրաժ 3000

Գետհրատի 2-րդ տպարան Յերևանում

I. ՎՈՉԽԱՐ

ՎՈՉԽԱՐԻ ԺԾԴԱԽՄՆ ՈՒ ՊԵՏՄՈԽԹՅՈՒՆԸ

Վոչխարն, անկասկած, յեղել ե մեկն այն առաջին ընտանի կենդանիներից, վորոնց ձեռք ե բերել մարդը: Այն ժամանակվանից սկսած, յերբ մարդը դադարեց այլ ես վայրենի կենդանիներ վորսալով ապրելուց և սկսեց ձեռնասուն դարձնել ընտանիներին, վոչխարը դարձավ նրա մշտական ուղեկիցը: մինչեւ այժմ ել շատ վաչկատուն հովվական ժողովուրդների համար վոչխարների հոտերը նրանց բարեկեցության գլխավոր աղբյուրն են կազմում:

Յեկ իրոք, շատ կենդանիների միջից, վորոնց հետ մարդը գործ ե ունեցել, վոչխարն ե համարվել ամենաձեռնասուն մարդու հետ միասին ապրելու համար: Վոչխարն այնքան հնազանդ, զիջող, սակավապետ ե, վոր նըրան սովորեցնելը դժվար չեր, և նույնպես բազմացնել կարելի է ամեն տեսակ տարրեր կլիմայական պայմաններում յեղած վայրերում: Սրա հետ միասին վոչխարը տալիս ե մարդուն բացի մսից և ճարպից մորթի և թանգագին բուրդ, վոր կիրառվում ե բրդե գործվածքների համար: Նա արագորեն բազմանում ե և ստացված վոչխարների հոկայական հոտերը բավականանում են աղքատիկ բուսականությամբ ու կարող են հիանալի կերպով իրենց գոյությունը պահպանել ինչպես անապատներում, այնպես ել սարերում:

Զարժանալի չե, վոր վոչխարը մարդու մոտ ապրել և իրեւ ընտանի կենդանի դեռևս այն ժամանակներում,

յերբ նա ինքը նախավայրենի յեր, մետաղներ ձեռք բերելու անկարող։ Այն ժամանակ մարդն ոգտվում էր քարե գործիքներով և, վորպեսզի վայրենի գաղաններից հընարավոր լինի ազատվել, հաճախ ապրում էր այն խըրճիթներում կամ հյուղերում, վոր շինում էր գետերի և լճերի ափերին ցցերի վրա։ Տեղ-տեղ հաջողվում եւ այս ցցերի ժամանակվա շինություններից հետքերը դանել հողի մեջ մնացած հանածո ցցերի, հղած քարե կացինների, մուրճերի և դանակների կերպարանքով։ Այս մընացորդների մեջ, վոր պահպանվում են լճերի ափերի շուրջը յեղած կիզահողում—տորֆում, հաճախ գտնվում են զանազան կենդանիների վոսկրներ, ունրանց մեջ դըտնըված եւ նաև ընտանի վոչխարի գանդ։ Այդ հանածո վոչխարի գտնված տեղը կոչվեց «տորֆավայր»։ ահա այդ վոչխարը հանդիսանում եւ ժամանակակից ընտանի վոչխարների հնագույն նախահայրը։ Նայելով վոսկրներին, ըստ արտաքինի նա ավելի շուտ նմանում եւ ալծին,— նրա գանգը յերկարածիգ եր, յեղջուրները յեռագեն ելին, դեպի գուրս ծալած, պոչը՝ յերկար, կախ ընկած։ «Տորֆավայրից վոչխարների այդպիսի առանձնահատկություններ նկատվել են տեղ-տեղ դարձյալ Ալպերի վոչխարների մեջ հին ժամանակներում, բայց ալժմս բոլորովին վերացել են։

Հետեաբար մարդս վոչխարը ձեռնասուն եւ դարձրել դեռևս շատ վաղ, անհիշելի ժամանակներում։ ըստ յերեւկոթին իսկական ընտելացումը տեղի յե ունեցել տակավին ցցերի շինությունների ժամանակներից առաջ։ Սակայն հարց եւ առաջ գալիս, թե մարդը վորտեղից եւ ձեռքը բերել այդ վոչխարը, և վորն եւ հատկապես այն վայրենի կենդանին, վորը մենք պետք եւ ընդունենք իրը մեր ալժըմյան վոչխարների և խուերի նախահայրը։

Այդ հարցին պատասխանելը դժվար չե, քանի վոր վայրենի վոչխարներին մենք բավականաշափ ծանոթ ենք,

և ըստ յերեսութին նրանց զանազան տեսակները մարդը սովորեցրել ե տարբեր ժամանակներում և տարբեր յերերներում։


Այսպես, Ասիայում, Կասպից ծովի և Հիմալայան լեռների միջև, միջին-ասիական լայնածավալ անապատներում ու նրանց կտրատող հսկա լեռնաշղթաներում ուսարահարթերում գտնվում են լեռնալին վալրենի խոյերի միջանի տեսակներ, վոր շատ մոտիկ ազգակցություն ունեն վոչխարների ընտանի ցեղերին։ Նրանցից ընտանի վոչխարների ավելի հավանական նախահայրը հանդիսանում է այսպես կոչված Տափասանային վայրի վոչխարը, վոր ապրում է հարթավայրերում ու լեռան ստորոտների փոքր բարձրություններում։ Նա աչքի յե ընկնում ցեղյուրների փալլուն գույնով ու յերկար պոչով, և պետք է կարծել, վոր վոչխարների յերկարապոչ տեսակները, մերինոսների նման, և նույնպես ասիական ճարպապոչ վոչխարները ծագում են այդ վայրենի վոչխարից։ Այս շրջանի անապատներում ամենահեռավոր ժամանակներից սկսած ապրում ենին բազմատեսակ թափառական ժողովուրդներ, և շատ հավանական ե, վոր հատկապես այստեղ ե կատարվել տափաստանի վալրենի վոչխարի ընտանեցումը։ Այստեղից ել նա տարվել ե Կովկասի և հարավ-ոռուսական տափաստանի վրայով Բեսսարարիա, Ռումինիա, ամբողջ Բալկանյան թերակղզին և Վենգրիա։ Բոլոր այս յերկրներում կան ընտանի վոչխարների այն ցեղերը, վոր նմանություն ունեն տափաստանի վալրենի վոչխարի հետ։ Մեր հարավ-ոռուսական վոչխարներն ու նրանց մեջ ել կտրակուլ վոչխարներն, անկասկած, նման են այս վոչխարին։

Այսպես ել բազմատեսակ յերկար պոչով վոչխարների ցեղերը, վորոնց պոչի մեջ կուտակվում ե ճարպի խորշոր քանակություն, առաջ են յեկել տափաստանի վալրենի վոչխարներից ու ձեռք են բերել իրենց յերկար

պոչը, ինչպես կյանքի մի հարմարություն տափաստանում, իրոք գարնան և ամառվա սկզբներին տափաստաններում լինում ե կերի մեծ առատություն, և կենդանիները կարող են այս ժամանակամիջոցում մեծ քանակությամբ ճարպ հավաքել: Աշնանն ել, և առանձնապես ձմեռը, յերբ տափաստանը ծածկվում ե ձյան հաստ ծածկոցով, վաչխարները դժվարանում են նրա տակից ձեռք բերել չոր խոտ, և նրանք ապրում են կիսաքաղց դրության մեջ: Այդ ժամանակ նրանց գեր պոչը նիհարում ե, վորովհետև ճարպը գործադրվում ե կենդանու ուժերի պահանձան համար: Ճարպի մեծ պաշարը նրանց հնարավորություն ե տալիս անցկացնելու յերկարատև ճմեռը:

Շրջանի արևելյան մասում, ուր ընակված են տափաստանի վայրենի վոչխարները, ըուծվում ե նրանց մի առանձին տեսակը, վորը զանազանվում ե վոչ միայն իր յերկար պոչով, այլև յերկար վոտներով ույեղջուռներով, վոր ձգվում են ուղիղ դեպի կողքերը: Ամենայն հավանականությամբ այդ վայրենի վոչխարներից առաջացել են դեռևս նախապատմական ժամանակներում վոչխարի այն ընտանի ցեղերը, վոր հետո տարվել են Հյուսիսային Աֆրիկա՝ ինչ-վոր վաչկատունների միջոցով: Այստեղ, մեր դարաշրջանից միքանի հաղարամակա առաջ, հին յեղիպտացիների մոտ բազմացել ե վոչխարների մի ցեղ, վոր շատ ե հիշեցնում արևելյան վայրենի տեսակը: Յեղիպտական բազմազան հուշարձանների վրա, վոր պահպանված են այն ժամանակներից սկսած, կարելի յե տեսնել վոչխարների պատկերներ, վոր իրենց ամբողջ տրտաքինով հիշեցնում են վերջիններին (նկար 1): Նրանց յեղջուռները դուրս են ցցված հորիզոնական դիրքով և վորված են պարուրածե, մի բան, վոր յերեք չեն ունենում վայրենի վոչխարները: Սրանից պարզ յերեսում ե, վոր այդ վաչխարներն արդեն յերկար ժամանակ այն ա-

տենները դանվում ելին ձեռնասուն վիճակում և կարողացել են փոխել միայն լեղջուրների ձեր, իսկ մլուս բոլոր բաներում կարողացել են պահպանել իրենց սկզբնական արտաքինը։ Հետաքրքրական ե, վոր ներկալումն ել



Նկ. 1. Ցեղիպտական ընտանի վոչխարներ։ Հին յեգիպտական կենդանագիր դամբարանի վրա՝ Ել-Բերշում։

Աֆրիկայի միջանի տեղերում պատահում են միանգամայն հենց ախալիսի ընտանի վոչխարներ, ինչպիսիք վոր պատկերացված են հնագույն հուշարձանների վրա։ Սակայն շատ տեղերից նրանք վոճակնել են վոչխարների ուրիշ ցեղերի կողմից։

Ընտանի վոչխարների յերկրորդ նախահայրերը յեղել են լեռնալին այն խոլերը, վորոնք բազմանում են միջինասիսական բարձրաբերձ լեռնաշղթանների վրա։ Սրանք վայելչակազմ, խոշոր կենդանիներ են, վորոնք աճելով ու բազմանալով աչքի ընկնող բարձրությունների վրա, հավիտենական ձյան սահմանների մոտ, սկիզբ են տվել ընտանի վոչխարների այն ցեղին, վորը կոչվում ե դմակավոր։ Նրա ճարպը հավաքվում է վոչ թե պոչի մեջ, այլ պոչի վրա, կազմելով խոշոր ու ծանր մի տոպրակ, — «դմակ»։ Դմակավոր վոչխարներ բուծվում են ալժմ ել Միջին Ասիայի տափաստաններում, զլխավորապես ղրղըգների ձեռքով։

Սակայն ընտանի վոչխարի բոլոր ցեղերն ել չեն ծագել Միջին Ասիայի վայրենի վոչխարներից. Դատերն ունեն և յեվրոպական ծագում. Հեռավոր ժամանակներում Յեվրոպայի միջին և հարավային լեռներում բազմանում ելին լեռնային վայրենի խրյեր, վորոնք կոչվում ելին մուժլոններ. Նրանք ներկայումս ել դեռ պահպանվում են կորսիկայի և Սարդինիայի լեռներում ու շատ վաղուց չե, ինչ նրանք պատահում ելին և Ղրիմում. Նրանց գլխավոր առանձնահատկությունն ե—պարուրածև վոլորած յեղջյուրներ ու կարճ պոչ: Մուֆլոններից են առաջացել բոլոր այն ցեղերը, վորոնք հատուկ են վաղ ժամանակներից իւվեր Հյուսիսային ու Միջին Յեվրոպային, նույնպես և Խ. Ս. Հ. Միության հյուսիսին: Ընտանեցման աղղեցությամբ և անբարեհաջող պայմանների շնորհիվ նրանք ըղգալիորեն մանրացել են իրենց նախահայրերի համեմատությամբ, բայց պահպանել են նրանց կարճլիկ պոչը և համեմատաբար կոպիտ բուրդը: Բրոնզի դարաշրջանի վոչխարները, վորոնց մարդը բազմացնում եր Միջին Յեվրոպայում այն ժամանակ, յերբ նա դեռևս ծանոթ չեր յերկաթին և ոգտվում եր բրոնզե գործիքներով, հիմնվելով նրանց գտնված մնացորդներով, նմանապես առաջացել են մուֆլոններից:

Վերջապես՝ իբրև ընտանի ցեղերի նախահայր հանդիսանում ե դարձյալ վայրենի վոչխարների և մի չորրորդ տեսակը. այդ՝ վուրբ-ասիական մուժլոնն ե, վոր անում ու բազմանում ե Փոքր Ասիայի լեռներում և զանազանվում ե յեվրոպականից իր փոքրությամբ և յեղջյուրների ձևով: Միքանի գիտնականների կարծիքով նըրանից ե ծագել քարե դարաշրջանի այն «տորֆավայրի» վոչխարը, վորի վոսկրները ցցերի շինությունների մնացորդների հետ միասին գտնում են Միջին և Հարավային Յեվրոպայում:

Վոչխարների այն ցեղերը, վորոնք նման են տորֆա-

վայրերի վոչխարին և ոժտված են ուղղաձիգ յեղջուրներով — այծի յեղջուրների նմանողությամբ և փոքրիկ հասակով, — ալժմս ել տեղ-տեղ պատահում են Յեվրոպասւմ:



Նկ. 2. Յեվրոպական մուֆլոն.

Ալպիսով պետք ե ընդունել, վոր վոչխարն ել, ինչպես ընտանի կենդանիների մեծամասնությունը, ձեռնասուն և ընտանի լեռ դարձել մարդու կողմից վոչ թե վորեկ մեկ վայրում, այլ զանադան, և նրա նախահայրերն ել յեղել են զանազան վայրենի տեսակներ: Սակայն լինելով գլաւավոր ընտանի կենդանի բոլոր վաչկատուն ժողովուրդների համար, վոչխարն ընդարձակորեն տարածվել ե շնորհիվ թափառականների գաղթականության և նրա վոչխարի ցեղերը լիակատար հնարավորություն են ունեցել տեղից տեղ փոխադրվելու:

Շատ հին ժամանակում բազմացրել են վոչխարների այն ցեղերը, վորոնք զլիսավորապես բուրդ են մատակարարում։

Հին հույներն ունելին մի ավանդություն և վոսկե գեղմնա ձեռք բերելու հերոսական արշավանքի մասին-այդ արշավանքը կատարել են արգոնափորդները Հասովսի գլխավորությամբ Հունաստանից դեպի Սև ծովի արևմբույան ափը։ Ամեն տեսակ խոչընդուներ ու վանակներ հաղթահարելուց հետո քաջերը ձեռք են բերել այդ գեղմը և տարել Հունաստան։ Պետք ե կարծել, վոր այդ բանաստեղծական հնարագիտության տակ թագնված ե այն հանգամանքի խոստովանությունը, վոր մի ժամանակ նրբագեղմ վոչխարները Սև ծովի ափերից են Հունաստան բերվել։ Նբանք նոր հալրենիքում գտան իրենց գոյության բարեհաջող պայմաններ, և այն ժամանակվանից Հունաստանում զարգացավ վոչխարաբուծությունը, զլիսավոր նըպատակ ունենալով բուրդ ստանալ գործվածքի համար։ Բրդե վործվածքները շատ ելին կնահատվում հնումը և Հունաստանում, նմանապես և Փոքր Ասիայի հունական գաղութներում։ զործվածքները պատրաստվում ելին հըրաշալի բրդից։

Ավելի ուշ, հռոմեական տիրապետության ժամանակներում, վոչխարաբուծությունն անցավ Իտալիա և այնտեղ դարձավ արդյունաբերության ամենակարևոր ճյուղերից մեկը։ Առանձնապես շատ վոչխարներ ելին բազմացնում Հարավային Իտալիայում, Ապուլիայում, ուր պարարտ մարգագետիններում արածում ելին հսկայուկան հոտեր, և ստացվում երամենահարաշալի հատկության բուրդ։

ԱՐԵՐԵՆԻ ՅԵՎ ԸՆՑՈՒՆԻ ՎՈԶԽՈՒՔ

Վայրենի վոչխարները բարձր լեռների կամ տափաստանների, ընդարձակ սարահարթների կամ լեռների ստորոտների ժայռոտ բարձրությունների բնակիչներ են։ Նը-

ըանք ապրում են փոքրիկ ընտանիքներով, վոր սովորաբար բաղկացած ե լինում մեկ խոյից ու միքանի եղերից ու ջահել կենդանիներից: Լեռների վրա ընակվող տեսակները զանազան վում են առանձնապես վայելչակազմ ու զորեղ մարմնով, մկանոտ վոտներով, աշխուժ ու խելացի աչքերով: Այս արագավազ ու ժիր կենդանիները, վորոնք հրաշալի կերպով կարողանում են մագլցել ժայռերն իվեր և ամենաանմատչելի ապառաժների ծերպերը հասնել: Այդ պատճառով ել նրանք շատ զգալուն են և ոժողած են սուր տեսողությամբ ու նուրբ լսողությամբ:

Դեռ հազիվ զգալով թշնամու մոտենալը, լեռնացին խոյը կանգ ե առնում, ականջները սրում և ամրող ջովին ուշադրություն դառնում: Ականջները սրում, պահակ ե կանգնում և նրա ամբողջ ընտանիքը, վորը հենց նոր անհոգ արածում եր ալպիական կանաչ մարզագետնի վրա: Դեռևս հազիվ թե մի անգույշ շարժում ե անում վորորդը, և արդեն կենդանիներն անհետացած են կայծակի արագությամբ, ինչպես ինչ-ինչ յերեսուցիներ...

Զարմանալի ճարպկությամբ և ապղեցուցիչ վստահությամբ լեռնալին խոյերը սլանում են անմատչելի զառիվայրերով, վազելով ներքեւ են նետվում գլխապտույտ զառիվայրերով, թեթև կերպով վոստնում են բերանաբաց անդունդներով... Նրանց մոխրագույն, դեղինին տըլվող յերանգով շուշը հրաշալիորեն թագցնում ե նրանց ժայռերի և քարակուլտերի մեջ, և հաճախ մինչև անգամ փոքրիկ հեռավորության վրա իսկ դժվար ե նկատել արածող կամ հանգստացող հոտը:

Արագաշարժությունը, ճարպկությունը և զգացությունը հատկություններ են, վոր անհրաժեշտ են այս կենդանիների գոյության համար: Այդ հատկությունները հանդիսանում են նրանց պաշտպանության միակ միջոցն ընդում գիշատիչների, վորոնք նրանց ամեն կողմից շըրջապատում են ու նետապնդում իբրև համեղավարի: Գալ-

գերն ու շնագալերը հավաքվում են վոհմակներով խոլերի վրա վորսի գնալու համար և աշխատում են գջլել ու քըշել վորեւ պառավ կամ հիվանդ կենդանի։ Վոչխարների համար վտանգավոր են և բորենիները, և մինչև անգամ լեռնային խոշոր արծիվները, վրոնք նույնպես չեն մերժի գառը նախաճաշիկ անելու։ Գիշատիչների ատամների դեմ չեն կարող ոգնել վոչխարների յեղջյուրների կուռ վոլորանները. նրանք պետք են գալիս միմիայն իրար դեմ ունեցած կռվում, վոր եգերի պատճառով տեղի լե ունենում վորձերի միջն։ Նրանց միակ փրկությունն այն ե, վոր ժամանակին նկատեն թշնամուն ու մի ակնթարթում անհետանան։

Տափաստանի վայրենի վոչխարները սարերը մազլցելու համար այնքան ել ճարպիկ չեն, սակայն նույնպես աչքի յեն ընկնում իրենց վոտքերի արագաշարժությամբ և զգալությամբ։ Բայց այս հատկությունը նրանց համար ավելի կարևոր ե. նրանք միշտ աչքի առաջ են, նրանք թագնվելու այնպիսի տեղեր չունեն, վոր թշնամու համար անմատչելի լինեն, ու վերահաս վտանգից նրանց փրկել կարող ե լոկ միայն վոտքերի արագությունը և իսկ ժամանակին զգայարանների որգանների յերեան հանելը։

Վայրենի նախահայրերի բոլոր այդ հատկությունները միանգամայն հակապատկերն են մեր ընտանի վոչխարի բնավորության գծերին։ Զե՞ վոր ամենքին հայտնի լե, վոր այդ մի ամենահիմար, անզգա կենդանի յե, վորն ունի միևնույն ուժեղ զարգացած հոտալին բնազդը։ Բավական ե, վոր մի վոչխար վորեւ բանից վախեցավ և անմտորեն մի կողմ նետվեց, —և ահա նրա յետելից սլանում են բոլոր մլուսները։ Վոչխարի շարժումները, նրա մանրաքայլ վազքը, վոստյունները — անշնորհք են ու վոչ արագ։ Թեպետք ետեւ լեռները չեն հանդիսանում անհաղթելի խոչընդուներ վոչխարների համար, բայց, այնուամենայնիվ, ել ավելի լեն դանդաղեցնում նրանց շարժումները։ Ճիշտ ե,

նրանք բավականին տոկուն են ու կարող են լերկար ժամանակ դիմանալ տեղափոխությունների, սակայն այս գեպօւմ, յեթե նրանց չափից ավելի չքշեն։ Հեռվից թէ շնամուն նշմարելու զգայությունը, տեղերի նկատմամբ կողմնորոշվելու կարողությունը, դժվար կացությունից մի յերք վորոնելու հնարագիտությունը՝ վոչխարները բոլորովին կորցրել են։ Իենց այս հանգամանքների շնորհիվ եր վոր մենք նրանց հիմար ենք անվանում։

Ի՞նչպես և ինչու առաջացավ այդ փոփոխությունը։ Ի՞նչը ճարպիկ, շարժուն, համակերպվաղ ու զգալուն կենդանուն դարձեց բոլորովին հակառակ հատկությունների տեր։ Իհարկե, այդ մարդու ձեռքի գործն եր։ Զափազանց արագաշարժությունը և կրակոտությունը, անշուշտ, ձեռնտու չեր նախնական հովվին, վորը հավանորեն դեռևս ձին իր տրամադրության տակ չեր առել, յերբ նա արդեն ձեռք եր բերել վոչխարի հոտը։ Նա ստիպված եր մշտապես իր հոտի յետելից ընկնել, ամեն կողմ փախչող կենդանիներին բռնել։ Յեվ պետք ե կարծել, վոր նա առաջին անգամ նույնիսկ միանգամայն անգիտակցորեն ընտրել ե ավելի պակաս դյուրաշարժ վոչխարներին, դիտմամբ սովորեցրել ե նրանց դանդաղկոտության, պահել կապանքի մեջ, կամ յերեք վոտքերը միասին կապած վիճակում, վորպեսզի նրանք չափից ավելի արագ չվագեն։

Միևնույն ժամանակ մարդն իր վրա յեւ առել հոտի անվտանգության բոլոր հոգսերը։ Նո ցերեկ ու գիշեր պահպանում եր հոտն ինքն անձսմբ, լարում եր իր տեսողությունն ու լողությունը, վորպեսզի իսկ ժամանակին նկատի գիշատիչների մոտենալը, հաճախ ազատում եր հոտը նրանց ձեռքից՝ իր սեփական անձը վտանգի յեթարկելով։ Վերջապես նա դեռևս ամենահին ժամանական նրանցաւ այս գործի տեսակետից շատ գնահատելի մի ոգնական ունեցավ։ այդ ոգնականը շունն եր։ Այն ըգայինությունը, վոր շների նախահայրերը գործադրում

Եյին վոչխարների նախահայրերին բռնելու համար, այժմս
մարդու ազդեցության շնորհիվ այն գործադրվում եր հո-
տի պահպանության համար՝ ընդեմ այլ կյանքը խանդա-
բողների։ Իրենք վոչխարները կարիք չունելին զգայնու-
թյուն պահպանելու, իրենց տեսողության ու լսողության
որգանները լարելու։ Նրանց մասին հոգ եր տանում
մարդն իր չորքոտանի ընկերոջ հետ միասին։ Յեվ քիչ-
քիչ վոչխարները կորցրին այդ հատկությունը, նրանց
տեսողությունն ու լսողությունը թուլացան։ Ավելի զգա-
յուն վոչխարները մինչև անգամ վտանգավոր տարրեր
ենին հոտի մեջ։ Նրանք վախենում ելին ամեն մի անծա-
նոթ առարկալից, ամեն մի աղմուկից ու հոտը շեղում
ելին ճանապարհից։ Շատ հավանական ե, վոր հենց այս
հանգամանքն իսկ գնահատվել ե մարդու անգիտակցական
ընտրանքների ժամանակ, և այդպիսի ելակները վոչնչա-
ցել են։ Վոչխարների մեջ առանձնապես գնահատվում եր
հնագանդությունը, — կենդանիները պետք ե գնալին այն
ճանապարհով, վոր ցուլց կտար մարդը, պետք ե կանդ
առնելին այնտեղ, ուր նա հարկավոր կհամարեր, և պետք
ե նորեն ճանապարհը շարունակելին, յերբ կրարեհաճեր
նա։ Այսպիսով հետզհետե վոչնչացավ սեփական ձեռնե-
րեցությունը, իրենց արարքների պատասխանատվու-
թյունը։

Ցեթե վայրենի նախահայրերից գորեե բան մնացել ե
ընտանի վոչխարների մեջ — այդ վախկոտությունն ե ու
հոտայնությունը։ Լեռնալին վայրենի խոյերի վախկոտու-
թյունը միտք ունի — մեծ մասամբ այն առարկաները, վոր
մոտենում են նրանց, նրանց թշնամիներն են, և աղմուկը,
վոր նրանք իմանում են լսողությամբ, իր մեջ վտանգա-
վորություն ունի։ Ընտանի վոչխարները վախենում են
հենց ենպես, անտեղի, և առանց վորեե պատճառի՝ իրենց
անծանոթ ամեն մի առարկալից։

Իհարկե, վոչխարի արագաշարժության վոչնչացման

մեջ վոչ պակաս դեր ե խաղացել և այն հանգամանքը, վոր մարդը ձգտում եր ստանալ վոչխարներից ինչըան կարելի յե շատ միս, ճարպ ու բուրդ.—այս մթերքներն իրենք արդեն ծանրացրել են վոչխարին, դարձրել են նրան ավելի քիչ ժիր ու շարժուն:

Չի կարելի չնշել դարձալ և մի հանգամանք, վոր կապված ե վոչխարի ընտանեցման հետ: Այս կենդանիները կորցրել են իրենց գույնի սիատեսակությունը և նրա նմանությունը շրջապատող միջավարի գույնի հետ: Այս նրանք կարիք չունեն թշնամիների հայացքներից թաղնվելու, քանի վոր նրանք գտնվում են մարդու պահպանության ներքո: Բացի դրանից մարդն ընտրում եր վոչխարների այն գույները, վորոնք նրան ավելի ելին դուր գալիս, և դիտակցաբար բուծում եր այս կամ այն գույնի ցեղերը: Ալսպիսով, որինակ, ստեղծվեցին սև ու սպիտակ վոչխարները, վորպիսիները բնավ չեն լինում քնության մեջ: Հալտնվեցին և շագանակադուլն, և՛ դեղին, և՛ մինչև անդամ խայտարդետ, ճարտուկ գույների ցեղերը:

Մենք այս որինակով տեսնում ենք, թե ինչպես մարդու հովանափորության ներքո կերպափոխվում ե կենդանիների վհչ միայն արտաքինը, այլ նաև նրանց ընդունակությունը, բնազդը, ընազդը, ընավորությունը:

Անշուշտ վոչխարների ցեղերի կազմակերպման ժամանակ միայն մարդու ընտրանքը չե, վոր գեր ե խաղացել: Վոչխարների տերերի հետ միասին յերկրեցերկիր գաղթելու հանգամանքն ստիպում ե նրանց հարմարվելու նոր կլիմայական պայմանների, նոր կերակրի: Այս անկասկած աղղել ե վոչխարների ընության և արտաքինի վրա և անմիջապես, և բնական ընտրանքի միջոցով,—հարմարվելու ավելի քիչ կարողություն ունեցողները մեռնում ելին, և մնում նրանք, վորոնք ավելի լավ ելին հարմարվում նոր պայմաններին:

Այսպիսով վոչխարների ցեղերը, ինչպես և մյուս բոլոր ընտանի կենդանիների ցեղերը, մշակվեցին հետզհետե ինչպես մարդու ազդեցության ներքո, այնպես և շրջապատող բնության,

Պ.Յ.Խ.Ը.Ր.Ն.Ե.Ր.Ի ՑԵՂԵՐԸ

Ինչպես մենք տեսանք, վոչխարն առաջացել ե Յեկրոպայում և Ասիայում տարբեր աղբյուրներից, տարբեր վայրենի ազգակիցներից։ Դրա համար ել վաղ ժամանակներից սկսած յերեացել են վոչխարների շատ տեսակներ, վորոնք զանազաննվում են միմյանցից այս կամ այն հպատկություններով։

Այդ բազմազանության համար կար և այլ պատճառ։ Վաղ ժամանակներից սկսած մարդս վոչխարներ երբազմացնում զանազան նպատակներով, — կամ գլխավորապես միս ստանալու համար, կամ բուրդ, կամ թե չե այն զըլխավոր մթերքը, վոր նա կամենում եր ստանալ, ճարպը կամ կաշին եր, վորից ստացվում ե արժեքավոր կաշվե ապրանք — «շերո», կամ, վերջապես, խիտ ու տաք խոյլ մորթ։

Այս զանազան նպատակներից ել բղխում եր այն հանդամանքը, վոր բազմացնում ելին և միմյանցից տարբեր ցեղեր։

Այս ցեղերի մեջ ամենից առաջ հարկավոր ե տարբերել «սսացու» վոչխարները և այն վոչխարները, վորոնք տալիս են նուրբ ու բրդե զործվածքների համար պետքական բուրդ — «նըբագեղմեա»։ Այնուամենայնիվ այնտեղ, ուր վոչխարաբուծությունը բնակչության համար հանդիսանում ե կողմնակի որազմունք, ուր վոչխարները բազմացնում են իմիջի այլոց, և մինչեւ այժմս ել պատահում են այնպիսի ցեղեր, վորոնք տալիս են միակերպ և միս, և միջին հատկության բուրդ։

Առանձին նշանակություն չունեցող այդ ցեղերին ե
պատկանում ամենից առաջ մեր ոռւսական նյուսիսային
կարնապոչ վոչխարը, վոր բուծվում և ամենուրեք և ա-
մեն տեղ գյուղացիական տնտեսության մեջ։ Այս վոչխարը
փոքր հասակ ունի, խիտ, խավոտ, բայց կոպիտ բուրդ
ունի, սովորաբար մոխրագույն։ Նրան տարեկան յերեք
անգամ են խուզում. — գարնանը, ամռանն ու աշնանը, և
նա տալիս ե քիչ բուրդ — 2—2½ կիլոգրամմ։ Սակայն
նա տալիս ե և բավականին լավ միս ու ճարպ, իսկ մի-
քանի տեղերում մեզ մոտ ստացվում է առանձնապես լավ
մորթի։ Այսպես մեղանում հոչակված են ռումանովյան ա
վոչխարները Յարոսլավի նահանգի Տուտայենքաղաքի շրր-
ջակալքուժ (նախկին Ռումանովո-Բորիսովլեբսկ)։ Նրանց
բաց-մոխրագույն մորթիներից շինվում են ռումանովյան
նշանավոր կիսամուշտակները։ Ռուսական կարճապոչ վոչ-
խարների զլխավոր առավելությունն այն ե, վոր նրանք
չափազանց տոկուն են և անպահանջոտ։ Նա կերի մեջ
սակավապետ ե, դիմանում ե և ցրտի, և քաղցի, և բացի
դրանից բավականին արագ ել բազմանում ե։ Այս բրուրը
նրան դարձնում են առանձնապես գնահատելի գյուղա-
ցիական աղքատիկ անտեսության մեջ։ Կարելի յե նշել
Ծղարծյալ, վոր նա տալիս ե նաև աղբ—աթար, վորը շատ
արժեքավոր պարարտիչ նյութ ե։

Արտասահմանում, հատկապես Անգլիայում, ուր վոչ-
խարի միսը շատ սիրված ե, բազմացրել են հատուկ շատ
մսացու ցեղեր։ Այդ, հարկավ, չի նշանակում, վոր այդ-
պիսի վոչխարների բուրդն ու մորթին չի կիրառվում
գործնականում։ Նրանք նույնպես ոգտագործվում են,
սակայն հանդիսանալով արդեն իբրև լեռկրորդական
մթերք, և առավելապես գնահատվուժ ե վոչխարների հենց
միսը։ Անգլիական վոչխարաբուլծները հաջողել են ստա-
նալ այնպիսի ցեղեր, վորոնք զանազանվում են իրենց խո-
շոր հասակով ու կշռով։ Մեծ խոյը յերբեմն կըսում ե

մինչև 200 կգր. (12 վութ) և տալիս ե ամենահրաշալիք միս՝ մեծ քանակությամբ ճարպի հետ միասին։ Այդ պատճառով ել նրանցից միքանիսն ունեն շատ բարակ վուկըքներ, մի բան, վոր նույնպես զնահատվում է, քանի վոր վուկըքների փոխարեն ավելի շատ միս ե բռնում։ Հատկապես լավ մսացու ցեղեր համարվում են բակվելելվյանները յեզ լեյնսերշիրյանները (նկ. 3):

Սակայն բավականին հաճախ վոչխարից պահանջվում է, վոր ամենից առաջ նա վահ թե միս տա, այլ լավ, նուրբ ու հեշտությամբ հյուսվող բուրդ։ Այսպիսի բրդից կարելի յե գործել հատկապես նուրբ մահուդ։

Դեռևս հնումը, հռոմայեցինների տիրապետության ժամանակներում իրենց բրդի հատկությամբ հոչակված ելին սպանական վոչխարները։ Նրանց գովքն են արել



Նկ. 3. Լեյնսերշիրյան ցեղի խոյ:

իրենց վատանավորների մեջ հռոմայեցի բանաստեղծներ Ռվիդիոսը և Վիրդիլիոսը։ Այդ վոչխարներն անտեղ են ընկել Արևելքից, վորովհետեւ նրանց նախահայրերն են լեզել, ինչպես մենք անսանք, միջին-ասիսկան վալրենի վոչխարները։

Միջին դարերում Սպանիալում նըբագեղմ վոչխար-ները, վորոնք մասցել ելին հոռմայեցիների ժամանակնե-րից, ստացան «Ամերինուներ» կոչումը, վոր նշանակում ե «ճանապարհորդող» վոչխարներ։ Իրոք այդ վոչխարների հսկայտկան հոտերը, վոր բաղկացած ելին լինում միքա-նի հազար դուխ վոչխարներից, կատարում ելին կանո-նակոր ճանապարհորդություններ լերկրի վրա։ Ապրիլ ամսին կամ մայիսին նրանք ուղևորվում ելին լեռները և անց ելին կացնում այնտեղ լեռների արգավանդ արոտա-վալրերում ամբողջ ամառը, իսկ աշնանը, սեպտեմբերին կամ հոկտեմբերին, վերադառնում ելին կրկին հովիտները, ուր և ձմեռում ելին։ Հաճախ նրանց ձմեռելու վայրը գտնվում եր ամառալին ոթեանից 30—50 որվա ճանա-պարհ հեռու, վոր անում ե 300—500 կիլոմետր։

Մերինոսները խոշոր չափսի չեն համնում։ Նրանց կշիռն ե 25 կգ. ($1\frac{1}{2}$ փութ), սակայն նրանց բուրդը յերկար ե, բարակ ու ալիքանման, նա տալիս ե հրաշալի մանվածք և կիրառվում ե ամենանուրբ բրդե գործվածք-ներ պատրաստելու համար։ Մերինոսներն այսքան են հոչակված իրենց բրդի հատկությամբ, վոր Սպանիալից տարածվեցին համարյա թե ամբողջ աշխարհում և ներ-կայումս բուծվում են վոչ միայն ամենուրեք Յեվրոպակում, այլև Աֆրիկայում և Ավստրալիայում։

Առաջին լերկրներից սեկը, ուր Սպանիալից մերի-նոսները տարվեցին և վորտեղ նրանք սկսեցին բազմա-նալ, Անգլիան եր. այնտեղ այդ ցեղը լերեաց առաջին անգամ գեռես XVII դարում։ Սակայն ավելի ուշ, լերբ Անգլիայում բնակչությունը խստ կերպով աճեց, բարձ-րացավ մօի հարցը, և մերինոսների փոխարեն; վոր բուրդ ելին տալիս, անգլիական վոչխարաբույծներն սկը-սեցին բազմացնել վոչխարների մասցու ցեղերը։ Ներկա-յումս Անգլիայում գրեթե մերինոսներ չկան։

Ֆրանսիայում, սակայն, այդ ցեղը մեծ ծավալում ստա-

ցավ և բավականաչափ բարելավվեց։ Այս տեսակետից առանձնապես հոչակվեց Ռամրուլլելի փարախը—Պարիղի մոտ։ այստեղ հաջող ընտրանքի և զուգախառնության միջոցով հաջողվեց դուրս բերել այնպիսի ցեղ, վոր զանազանվում եր նախնականից, և նա ստացավ «ռամրուլլե» ցեղ անունը։ Նրա զլխավոր առանձնահատկությունը կաշու նատուկ կազմությունն ե, վերջինս մարմնի վրա կազմում ե այսպես կոչված «Փիժմա»-ներ, այսինքն խորախոր դարսեր։ Այս բանը վոչխարին շատ տարրորինակ տեսք ե տալիս։ թվում ե, թե նա հագել ե ուրիշի, ավելի լայն կաշի, վոր նրա վրա չի գալիս։ Կաշվի այդպիսի կազմության հետեւանքով նրա մակերեսը բավականաչափ մեծանում ե, և հետեւարար մեծանում ե նաև կաշուց վերամշակած բրդի քանակությունը։ Յեվ իրոք, առաջին անգամ Ֆրանսիա տարված մերինոսները տալիս ելին ընդամենը միջին թվով 2-ական կզ բուրդ ամեն մի զլխին, այն ժամանակ, յերբ արդեն 1801 թվականին վերամշակված ռամրուլլե ցեղը տալիս եր միջին թվով 3,6 կզ, իսկ ներկայումս այդ ցեղի վոչխարները տալիս են միջին թվով 4-5 կզ բուրդ հոտի ամեն մի զլխին։

Գերմանիայում մերինոսներից բուծվեցին-բազմացան այսպես կոչված Ելեկտորալ-ընտրողության ցեղի վոչխարներ, վորոնք զանազանվում են բրդի առանձնակի նրբությամբ ու քնքշությամբ, վորը ծայր աստիճան հարկավոր ե մահուդ պատրաստելու համար։ Ավելի ուշ արդեն, յերբ գործարանատերերը սովորեցին արդեն պատրաստել լավ մահուդ՝ նույնպես միջին նրբությամբ, Գերմանիայում և Ավստրիայում սկսեցին բուծել ներքեսի ցեղը՝ շատ խիտ, սակայն վոչ բավական նուրբ բրդով։ Այս ցեղը տալիս ե նույնպես շատ բուրդ, վորովհետև նրա մոտ ևս բուրդը հավաքված ե դարսերով։ Հոտի ամեն մի զլխից ստացված միջին քանակի բուրդը հասնում է 3,6—5 կզ։


Նեղբետակի ցեղի վոչխարները բազմացնում են և մեր հարավային ստեղներում վոչխարաբուծական խոշոր տընտեսություններում, ու հետաքրքրական են մեզ համար դարձլալ այն տեսակետից, վոր նրանցից բուծվել ե վոչխարների հատուկ ոռւսական ցեղը, վոր ինչ-ինչ պատճառներով կոչվում ե ինֆանտայու։ Այս ցեղն ունի մարմնի վրա քիչ քանակությամբ կաշու դարսեր ու տալիս ե գլխին 3—4 կգ յերկարություն, բայց վոչ առանձնապես նուրբ բուրդ։

Ռուսական հարավային ու հարավ-արևելյան տափաստաններում զանազան վաշկատուն ժողովուրդների վոչխարաբուծությունը ծաղկել ե վաղ ժամանակներից սկսած, բայց վոչխարների կուլտուրական ցեղի բուծումն սկսվել ե միայն Պետրոս I-ի ժամանակ, յերբ Ռուսաստանի համար մերինոս ստանալու զիր գրվեց։ Մերինոսները մեր մեջ իրենց գոյության համար հրաշալի պայմաններ գտան։ Արդեն XVIII դ. և առանձնապես XIX դ. սկզբներին մերինոսների հսկայական հոտեր յերկացին հարավ-ռուսական տափաստաններում, նրանց սկսեցին բազմացնել Ռուսաստանի հարավի խոշոր հողատերերը, և մեզ մոտ ստացվել սկսեց գերազանց հատկության նուրբ բուրդ։

Բացի ինֆանտադույս՝ մեր մեջ բուծում ելին և դարձյալ նրբազեղմ վոչխարների միքանի ոռւսական ցեղեր, վորոնց մեջ առանձնապես հոչակենական ե «Մազայկի» ցեղը (նկ. 4), վոր տարածված ե Ղրիմում, Հյուսիսային Կավկասում և Ռւկրայինացի ԽՍ Հանրապետության հարավային նահանգներում։ Այսպիսի ցեղի լավ վոչխարը տալիս ե 4—5 կգ բուրդ, ըստ վորում այսպիսի բրդի յերկարությունն ե 5—7 սմ։ Խոյերի կշիռը հասնում է մինչև 80 կգ։

Բացի ներմուծած ցեղերից, վոր մեզ մոտ բերված են հարավից, մեր հարավային տափաստաններում անհեշելի ժամանակներից բազմացրել են և մի ամբողջ շարք սեփական վոչխարների ցեղեր, վորոնք դանազանվում են

առանձնակի արժանիքներով: Նրանց մեջ առաջին տեղը
բռնում է կարակուլ վոչխարը, վոր բուծվում է Բուխա-
րայում և Թյուրքեստանում (նկ. 5):




Նկ. 4. Մազայեան ցեղի խոր:

Այս ցեղը բռդի բարձր հատկություններով աչքի է ընկնում. բուրդին առանձնապես յերկաթը չե, բայց մետաք-
սային եւ և փայլուն, սև գույնի: Սակայն կարակուլ վոչ-
խարը տալիս է թանգագին «կարակուլ», ալլապես ասած՝
«գառնուկի» կամ սմուշկալի մորթ», վորից պատրաստում
են ամենքին հայտնի «բուխարա»*) ոճիքներ ու գլխարկ-
ներ: Այդ վոչ այլ ինչ ե, յեթե վոչ այդ ցեղի մատղաշ,
նորածին գառնուկների մորթը: Նա արդեն ծնվում եւ ա-
լիքանման կամ գանգուր մանրիկ խուճուճներով. ավելի
ուշ, յերբ վոչխարը զարգանում ե, նրա մորթը կորցնում
է այդ հատկությունները և տգեղ եւ դառնում: Այդ ցեղի
մեջ առանձնապես գնահատվում են խիստ բազմածնու-
թյունը և գառնուկների մորթիների հատկությունները:
Հաճախ վոչխարների մինչև $50^{\circ}/_{\circ}$ -ը բերում են միանգա-

*) «Барашковые»թարգմանված ե «բուխարա», վորով-
հետև այդ մորթիները մեր մեջ կոչվում են «Բուխտրալի» մոր-
թիներ:

մից շական գառնուկներ։ Այս վոչխարների առանձնահատկություններից ե դարձյալ այն, վոր նրանք բավականին կաթ են տալիս, վորից պատրաստվում ե լուղ ու զանազան տեսակի պանիր (բրինզա, կաչկովալա և այլն):

Միքիչ ավելի ցածը հատկության ստուշկաներից առաջնում են յերկու ուրիշ ցեղ, — վալիչ, վորը բազմացնուժ են Ղրիմում ու ցուցկա կամ չուշկա, վորը բազմացրած ե Ուկրայինացի մերձնովյան նահանգներում, Պոդոլյյեյում ու Բեսսարաբիայում։




Նկ. 5. Կարակուլ վոչխար։

Բոլոր այս ցեղերը վերաբերում են ճարպապոչ վոչխարներին։ Նրանք ունեն հաստ ու յերկար, իր մեջ մեծ քանակությամբ ճարպ հավաքած պոչ։ Նրանց հետ չպետք ե շփոթել այն ցեղերը, վորոնց մոտ ճարպ կուտակելը մասնագիտություն ե դարձել ու համարվում ե գլխավոր արժանիքը։ Մրանք այսպես կոչված դմակավոր վոչխարներն են (Նկ. 6), վորոնք լախորեն տարածված են մեր հարավային ու հարավ-արևելյան տափաստաններում։ Նրանց պոչը շատ կարճ է, բաղկացած ե 3—5 վողնից,

իսկ նրանց վրա, գավակափոկի վրա կազմվում ե խո-
շոր դմակը—յերկու ճարպալին բարձիկներ 4—5 կգ ծան-
րությամբ, իսկ յերբեմն ել 12 կգ և ավելի: Դմակը միայն
վերեկից պատած ե բրդով, իսկ ներքեցից նա լիրկ է: Այն
ճարպը, վոր պարունակվում ե նրա մեջ, սկզբնապես յե-
ղել ե հավանորեն վոչխարի համար պաշարի մատերիալ
նրանց հաճախակի քաղցի պահին տափաստաններում ձմեռ
ժամանակ: Այսուհետև ընտրանքի միջոցով մարդս ամրա-
պնդեց այդ առանձնահատկությունը, վորովինետև վաշկա-
տունների համար, վորոնք զլխավորապես բազմացնում են

դմակավոր վոչխարներ,
ճարպը շատ գնահատելի
ոննդարար մթերք ե, հատ-
կա պես ձմեռը: Դմակա-
վոր վոչխարները գանա-
զանվում են մեծ դիմաց-
կունությամբ. նրանք
կարող են հսկայական
տարածությամբ յերթեր
ունենալ, կարող են տա-
նել և սաստիկ ցուրտը,
և ձմեռային քաղցը:

Վոչխարների ցեղերն
սյսպիսով՝ շատ բազմա-
տեսակ են և չափազանց
հարմարեցրած այն պա-
հանջներին, վոր նրանց
առաջն ե դնում մարդը: Այս պահանջների բազմատեսա-
կությունը, նախահայրերի բազմատեսակությունը, վորոն-
ցից ծագել են ընտանի վոչխարները, և նույն պես պալման-
ների բազմատեսակությունը, վորոնց մեջ նրանք ապրում
են,—ահա սրանք բոլորն ել հանդիսանում են պատճառ
ցեղերի բազմատեսակության և բազմաթիվության:



Նկ. 6. Դմակավոր ցեղի խոյ:

առաջն ե դնում մարդը: Այս պահանջների բազմատեսա-
կությունը, նախահայրերի բազմատեսակությունը, վորոն-
ցից ծագել են ընտանի վոչխարները, և նույն պես պալման-
ների բազմատեսակությունը, վորոնց մեջ նրանք ապրում
են,—ահա սրանք բոլորն ել հանդիսանում են պատճառ
ցեղերի բազմատեսակության և բազմաթիվության:

Ի՞՞ՉՊԵՍ ԵՆ ԲԱԶՄԵՑՆՈՒՄ ՎԱԶԽԱԲԲ

Վոչխարներ բազմացնելու ամենանախնական յեղանակն այն ե յեղել, ինչ վոր մենք տեսնում ենք թափառական ժողովուրդների մեջ: Նրանց համար վոչխարները մեծ մասամբ հանդիսանում են բարեկեցության զլխավոր աղբյուր,—նրանցից թափառականներն ստանում են և հիմնական կերակուրը,—միս, ճարպ, կաթ ու հաղուստ և մինչև անգամ բնակարան, վորովհետև շատ թափառական ժողովուրդների մեջ բնակարանի տեղ են ծառայում թաղիքե վրանները: Այդպիսի վրանը թիթե ե, փոխադրելի և միհնուուն ժամանակ տաքուկ ու հարմար բնակարանի համար, միանգամայն անհրաժեշտ թափառիկ ձեի կյանքի դեպքում:

Ի՞նքը թափառիկ կյանքի ձեր նշանակալից չափով պայմանագրվում ե նրանով, վոր թափառականի մոտ լինեն բազմաթիվ վոչխարների հոտեր: Վոչխարներն արագորեն վոչնչացնում են մինչև անգամ տափաստանի շատ խիտ ու առատ բուսականությունը և կարիք ե լինում հոտերը քշել նորանոր տեղեր: Բացի դրանից մեր տափաստաններում, հատկապես հարավ-արևելքում, մեր բուսականությունը ամառը չորանում ե շոգերից, և հոտերին ուտելու բան չի մնում: Դրա համար ել վաչկատուններն ստիպած են լինում հոտերի համար կեր փնտռել լեռներում, ուր մեծ-մեծ բարձունքների վրա ամառն ել բավականաչափ խոնավություն ե լինում: Այնտեղ տարածվում են ընդարձակ ու արդավանդ ալպիական մարգագետինները, վորոնց վրա հոտը կարող ե աժառվա ընթացքում հիանալի կերպով կերակրվել:

Հյուսիսալին Թյուրքեստանի զրդները կանոնավոր ճանապարհորդություն են կատարում հովիտներից դեպի լեռները, Յուրաքանչյուր առու (գյուղ) գնում ե հին ժամանակներից իվեր վորոշած մարդուտով, հանդարտ ու ա-

ռանց շտապելու շարժվում ե հովիտներից դեպի լեռները
և ամառվա սկզբին արդեն վրա հասնում «ամառելու»
(ջեյլառ) ալպիական մարգագետիններում։ Այնտեղ նա
նույնպես այս ու այն կողմ ե շարժվում վորոշված շրջա-
նում այնքան, մինչև վոր կերը նվազում ե և ցրտերը վրա
հասնում։ Այդ ժամանակ սկսվում ե ամբողջ քոչի վերա-
դարձը։ Նորից բրդե վրանները բոլոր ստացվածքներով
դարսվում են ու բեռնավորվում ուղտերին ու ձիերին,
ամբողջ բնակչությունն ուղեկցում ե իր հոտերին և ուղղ-
վում դեպի հովիտը։ Զմեռը սոտենալուն պես առւլը պատ-
րաստվում է ձմեռն անցկացնելու նույնպես առաջուց և
վաղ ժամանակներից արդեն վորոշված տեղում, մի տեղ,
ուր ձյունը շատ խորը չի, վոր վոչխարները կարողանան
ձմեռն իրենք իրենց համար կեր ձեռք բերել, պոկելով
այն ձյան տակից իրենց կճղակներով։ Նրանց համար ձմեռ-
վա կեր չեն մթերում։ Յեթե ձյունը սովորականից ավե-
լի յե գալիս, կամ յեթե տաքերից, իսկ հետո յեղած սառ-
նամանիքներից սկսվում ե բարակ սառցային շերտը գո-
յանալ, — վոչխարները ձյան տակից իրենց համար կեր
ձեռք բերել չեն կարողանում, և վրա յե հասնում սովոր ու
համանարակը — ջարդը։ Այդ վաշկատունների համար նույն-
պիսի մի դժբախտություն ե, ինչպես վոր հողագործի հա-
մար անբերիությունն ու յերաշտը։

Այսպիսի նախնական վոչխարապահության դեպքում
տիրոջ ամբողջ հոգսն իր հոտի վերաբերժամբ հանդում ե
այն բանին, վոր պահպանի հոտը գալլերի հարձակումնե-
րից ու տեղից-աեղ քշի։ Իհարկե այս հանդամանքում ան-
հնարին ե վորեն առանձնապես լավորակ սերունդ բազ-
մացնել։ Վոչխարները մնում են մասր դրությամբ և ու-
նենում են վատ ու կոպիտ բուրդ։

Մեր դյուղացիական տնտեսության մեջ վոչխարը
նույնպես առանձին հոգատարությամբ չի ոգտվում, բայց,
այնուամենայնիվ, ձմեռում ե փարախում ու կերակրվում

նրա համար մթերած խոտով կամ դարձանով։ Ամառը նը-
րան բաց են թողնում արոտավայրում մնացած հոտի հետ
միասին, սակայն հաճախ նա ստիպված է լինում բավա-
րարվել յերկրորդ տեսակի կերով, — վոչխարներին արա-
ծացնում են և հանգիստ թողած վարելահողերում, և խոտը
հնձած մարզագետիններում, և ցորենը հնձած արտերում։

Մեզ մոտ հարավում խոշոր վոչխարաբուծարաննե-
րում ավելի շատ և հոգս տարվում վոչխարների մասին։
Նրանց համար շինում են տաք փարախներ, ըստ հնարա-
վորության չոր ու լուսավոր, վորովիետե վոչխարն ամե-
նից ավելի փախենում ե շենքի խոնավությունից։ Հոգ են
տանում և բավականաչափ առատ կերի մասին, վորով-
հետեւ կերտկրելուց ե կախված մսի ու ճարպի և վորա-
կը, և ջանակը, դրանից ե կախված նաև քրդի արժեքը։
500—1000 զլուխ վոչխարից բաղկացած հոտերն ամառն
արածում են տափաստաններում հմուտ հովվի (չորան)
հսկողության ներքո, վորը լավ գիտե արածելու բոլոր տե-
ղերը, և առանձնապես հոգում ե, վոր հոտը շընկնի խո-
նավ ճահճային հարթությունները, — այնտեղ վոչխարները
հաճախ հիվանդանում են զանազան հիվանդություններով։

Մեզ մոտ հարավում վոչխարներին խօւզում են մա-
յիսին կամ հունիսի սկզբներին։ Նախապես բուրդը լվա-
նում են, վորի համար վոչխարները սիքանի անդամ գե-
տը, լինը կամ լճակն են քաշ, և մարդի մեջ սարքում են-
ցանկապատեր, այնպես վոր կազմվում ե մի տեսակ մի-
ջանցք — կորրիդոր, վորոնց սիջոցով վոչխարները պետք ե
վաղեն։ Յերբեմն ալդ ժամանակ նրանց ձեռքով լվանում
են։ Լվանալուց հետո վոչխարը կապում են, դնում են
տախտակի վրա և խուզում մեծ մկրատով։

Ավստրալիայի և Հյուսիսային Ամերիկայի խոշոր վոչ-
խարաբուծարաններում խուզելու համար ոդտվում են ե-
լեկտրականությամբ, Կարսավիրական մեքենաների նմա-
նությամբ շինված խոշոր մկրատները գործի յեն դնում

փոքրիկ ելեկտրոմոտորով, վորը հոսանքն ստանում է դի-
նամոմեքենայից։ Տասնլակներով վոչխարներ մեկեն դըր-
վում են հատակին՝ այն տասնլակներով մկրատների ներ-
բո, վորոնք սկսում են շարժվել փոքր դինամոմեքենա-
յից ստացված ելեկտրական հոսանքով, և խուզելը կրում
է բոլորովին գործարանալին ընույթ։ այս կատարվում է
արագությամբ և բանվորների ուժի չնշին սպառումով։

Դրա համար ել այզպիսի ելեկտրական խուզումը շատ
կառարելադորձված է։ Ստացվում է ավելի շատ բուրդ,
բուրդը խուզվում է ավելի կող, և ընդումին շատ ավելի
արագ։ բայց գրանից բանվորների այնքան մեծ քանակու-
թյամբ ուժ ել չի պահանջվում, ինչպես ձեռքով խուզե-
լու ժամանակ։ Յեթե հոտը բազմաթիվ է, այն գեղքում
շատ ավելի ձեռնտու լե, վորովհետև ընդհանրապես խու-
զումը պետք է արագորեն կատարել։ վոչխարներն սպա-
սելուց հուզվում, խուզելուց հետո վախենում և կորցնում
են իրենց կշիռը։ Խուզված բուրդը ընտրելով բաժանում
են ըստ տեսակների և հակեր կապում։

Յերբ բուրդը գործարան է մտնում, խնամքով, ման-
րազնին կերպով ջոկջում, տեսակավորում, լվանում, ա-
ռանձին մեջենաներով սանրում են, իսկ հետո նրանից
մանում են բրդե մանվածք, վորն արդեն տարվում է
բրդե կտորներ պատրաստելու համար՝ մահուդ, դրապ և
այլն։ Վոչխարների բրդի ավելի կոսկիտ տեսակները գոր-
ծադրվում են մերմեջ՝ թաղիքներ, թաղիքի կառորից ձեռվա-
գուտնամաններ (վալենկա) և թաղիքե կիսակրոշիկներ (տուֆ-
լի) պատրաստելու համար։ Այս նպատակի համար բուրդն
ուղղակի խիստ կերպով ծախսվում է, ինչպես ասում են՝
«թափալվում՝ վխտում ե»։

ԱԶԽՈՐՆԵՐԻ ՀԱՎԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես մենք տեսանք՝ վոչխարը լեռների և անջրդի
պափաստանների ծնունդ է և այդ պայմաններում նա և

ներկայումս ել իրեն զգում ե ամենալավ կերպով։ Սակայն խոնավ, ճահճոտ և անտառոտ վայրերում նա տառապում է խոնավ կիվալից ու հաճախ հիվանդանում եւ Զանագան հիվանդություններով առանձնապես հիվանդանում են այդ պայմաններում տոհմիկ վոչխարները, — նըրանք ավելի քնքուշ են ու զգալուն, քան տեղական հասարակ ցեղերը։

Վոչխարների բոլոր հիվանդություններից ամենից դաժանը սիրիական է։ Նա հաճախ ե մվասում վոչխարաբուծությանը՝ մինչև միլիոնավոր ոռութիների հասնող մվաս, իսկ այն դեպքում, յերբ հիվանդությունը տարածվում է, կոտորվում են ամրողջ հոտերով։ Այս հիվանդությունն ամենից հաճախ հայտնվում է տափաստաններում ամառվա շոգերին, յերբ վարակը տարածվում է վամպիրների — արյուն ծծող ճանճերի միջոցով։ Վոչխարին կծելով, ճանճերը վարակում են նրան հիվանդաբեր միկրոբներով, և վոչխարը հիվանդանում է։ Նա դադարում ե ուտելուց, դառնում ե տխուր, նրա վրա տաքություն ե դալիս և յերբեմն ել միքանի ժամից հետո մեռնում ե ջղաձգությունների մեջ։ Այդ վարակն առենից շատ տարածվում է այն արոտներում, վորտեղ վոր թաղված են ցեղել սիրիակախտով սատկած վոչխարները։ Ուստի և, ինախազգութացում վարակի, անհրաժեշտ ե խորը թաղել ընկած կենդանիների դիակները կամ, ավելի լավ ե, այրել։ Ներկայումս հաջողվում է նմանապես հոտերը պաշտպանել հատուկ սրակումներով։

Հաճախ վոչխարի մոտ նկատվում է լուբահատուկ մի հիվանդություն, վոր կոչվում ե վոչխարի զիսապտուկտ հիվանդություն։ Այս հիվանդության եյությունն այն է, վոր հիվանդ վոչխարը կորցնում է ախորժակը, գլուխը թեքում ե դեպի կողը և միքանի ժամանակից հետո սկսում է արագորեն պատվել ալնքան, մինչև վոր գետինն իվայր ե գլորվում շնչառապառ, մեռած։ Այս հիվանդությունը

գոյանում ե հատուկ ժապավենալին ուղեղի-ճիճուների ձվաներից, վորոնք ընկնում են վոչխարի ստամոքսը խոտի հետ միասին։ Աղիքի մեջ նրանցից զուրս են զալիս մանր գոյակներ, վորոնք թափանցում են արյան մեջ, և արյան հետ միասին նրանք անցնում են վոչխարի զլիսի ուղեղը։ Այնտեղ ալդպիսի գոյակից հետզինետե, սիրանի ամիսների ընթացքում զարգանում ե խոշոր բշտիկ, վոր լցված ե լինում հեղուկով և զլիսիկի ներսում ունենալով ուղեղալին ճիճու կտմ ցենուրա։ Այդ բշտիկը յերբեմն ուղեղում այնպես ե աճում, սեծանում, վոր սկսում ե արղեն ճնշել գանգի վոսկըները, և սրանք կամաց-կամաց այնքան են բարակում, վոր բշտիկը նրանց միջից պարզ յերկում ե։ Ահա բշտիկի այդ ճնշումն ուղեղին առաջ ե բերում վոչխարի պտույտը և նրա մահը։ Զափահաս ճիճուները զարգանում են շների և գալերի աղիքում, և նրանց ձվերը դուրս են զալիս այդ կենդանիների կղկղանքի հետ։ Իրենց հերթին շներն ու զալերը վարակվում են ուղեղային հիվանդությամբ, այդ պարագիտով վարակված վոչխարների միան ուտելով։ Գիշատիչի աղիքներում բշտիկի մեջ գտնված ամեն մի զլիսիկից առաջանում ե ճիճվի զլիսիկ, հետո յել չափահաս ճիճու, վորն սկսում ե յետեկի կողմից ձվաներով լեցուն անդամիկները դուրս բերել։

Յերբ պարզվեցին վոչխարների այս հիվանդության պատճառները, այն ժամանակ ինքնբատինքան պարզ յեղավ, թէ ի՞նչ միջոցով պետք ե կռվել նրա դեմ։ Գետք ե անմիջապես վոչնչացնել հիվանդացած կենդանիներին և այրել նրանց գլուխները, վորսկեսզի նրանք շների և դարձերի ձեռքը չընկնեն։ Յեթե զիշատիչները չվարակվեն ճիճուներով, այն դեպքում վոչխարներն ել չեն վարակի զլիսապտույտով։

Վոչխարներին վարակող ավելի քիչ վտանգավոր ճիճուներ են յերգի յերկրեան նինուները։ Սրանցով վոչ-

խարները վարակվում են խոնավ, ճահճային և առանձնապես ջրով վողողված մարգագետիններում, վորովնետեայդ յերկբերանների ջահճել տեսակներն իրքեւ պարագիտներ ապրում են ջրալին կենդանիների մեջ—ջրալին իրխունչների մեջ։ Վորպեսզի վոչխարներին կարելի լինի ապահովել վարակումից, հարկավոր ենթանց պահել չոր արոտներում, հեռու ջրից ու ճահճից։

Բացի դրանից վոչխարները հաճախ տառապում են բոսով, վորն առաջանում ե մանր, հասարակ աչքով անտեսանելի քոսի միջամտներից, վորոնք թափանցում են վոչխարի մորթու մեջ և այնուեղ առաջացնում անցքեր։ Քոսի միջամտները գրգռում են վոչխարին, վորն ոկտում է քորել, կաշու վրա կազմվում են թեփոտ խոցեր և յերբեմն ել թանձր ու խիտ թարախի կեղեներ, վոր պատում են կաշին։ Այս հիվանդությունը բուժում են՝ զանազան թունավոր միջոցներով մեռցնելով քոսի միջամտներին, ավելի հաճախ լողացնելով թունդ ծխախոտի լուծվածքի մեջ։

Ընդհանքապես վոչխարի առողջությունը պահպանելու համար անհրաժեշտ ե հօգ տանել այն մասին, վոր նա մաքրության մեջ պահպի, իրեն համար բավականին հարմար կեր ստանա և խոնավությունից ել շտանջվի։

II. Ա Յ Թ

ԱՅԻ ՖԸՆՈՒՄՆ ՈՒ ՊԵՏՄՈՒԹՑՈՒՆԸ

Այն այն ամենահին ընտանի կենդանիներից եւ, վորոնց մարդը ձեռնասուն եւ դարձել ամենավաղ ժամանակներում, և վորոնց մասին չի մնացել և վոչ մի պատմական հիշատակաբան։ Այծերի վոսկըները գտնվում են արևմտյան Յեվրոպայի ցցլա շինությունների փլատակների մեջ, մինչեւ անդամ ավելի վաղ ընկած, քան վոչխարների հանածո մնացորդները։ Սրանք սկըզբնապես շատ մանր տեսակի եյին, բայց այն ժամանակվանից սկսած, յերբ մարդն սկսեց ոգտընկել բրոնզլա գործիքներով, յերեան են դալիս և ավելի խոշոր այծեր։

Այն ժամանակներում,

վորոնց մասին պահպան-

ված են արդեն պատմա-

կան տեղեկություններ

և հուշարձաններ, մենք


գտնում ենք ամբողջ աշխարհում լայնորեն տարած-

ված ընտանի այծեր։ Յեգիտուական հուշարձանների վրա

պահպանված են ընտելացած արու ալծերի պատկերներ

շատ յերկար յեղջյուրներով և ուղղաձիգ ականջներով

(նկ. 7)։ Սրանք, անկատկած, ձեռնասուն՝ դարձրած Սինայի



Նկ. 7. Սինայի ընտելացած՝ արու այծի կանանց յեգիտուական հարթաքանդակի վրա.

և հուշարձաններ, մենք

վալրենի արու ալծերն են, վորոնք վալրենի դրութիւմը
մինչև ալժմս ել գտնվում են Սինայի թերակղզում և
Փոքր Ասիայում:

Ճիշտ ալղպես բարելոնան շատ հնագույն հուշարձան-
ների վրա մենք գտնում ենք ընտանի ալծերի պատկերների-
նկողորած յեղջուրներով և կախ ընկած ականջներով. այդ-
պիսի ականջներ չեն պատահում և վհչ մի վալրենի տեսակի
մոռա (Նկ. 8): Պարզ ե, վոր արդեն այս հեռավոր ժամանակ-
ներում այծը վաղուց արդեն սովորցրած, ձեռնասուն
դարձրած կենդանի յեր, վորը կարողացել եր ընտրանքի
միջոցով վերամշակել այդ հատուկ նշանները, վոր հա-
տուկ են միայն ընտանի կենդանիներին,—չե՛ վոր վալ-
րենի կենդանիները մօտապիս ստիպված են պահակի դե-
րում լինել, միշտ պատրաստ և, ինչպես ասում են, «ա-
կանջներդ միշտ խշած պահիր»:

Հին հունական ավան-
դությունների և հունա-
կան պատմական հուշար-
ձանների վրա յեղած
պատկերների և գեղար-
վեստի արտադրություն-
ների համաձայն կարելի
յե՛ կարծել, վոր հին Հու-
նաստանում և Փոքր Ա-
սիայում այծը հայտնի յե-
յեղել անհիշելի ժամա-
նակներից: Առանձնապես
հոչշակվել են Փոլուգիալի,
Լիբիայի և Կիլիկիալի
ալծերը, վորոնք տալիս
եյին յերկար ու նրբին
բուրդ, վորից պատրաս-
տում եյին բրդե թանգագին գործվածքներ, գորգեր ու



Նկ. 8. Ասորական ընտանի այծերի
պատկերներ:
227-3

թաղիքներ: Հին հույները շատ եյին գնահատում նաև ալծի պանիրը, վորը նրանց սննդի զլսավոր մթերքներից մեկն եր: Հիմք կա կարծելու, սակայն, վոր այդ պանիրը, ինչպես և հավանորեն հենց այծերը, հույներն ստացել են մեր նախ սհալըբերից, սկզբաներից, վորոնք բնակվում ելին հարավ-ռուսական տափաստաններում:

Այծի պանիրը գործադրվում եր իրբեկ կերակուր դեռևս ալելի ուշ՝ հոսմայեցիների կողմից, ընդումին հատկապես հոչակված եր սիցիլիական պանիրը:

Նստակյաց ու կիսանստակյաց հին ժողովուրդների մոտ այծը հանդիսանում եր նրանց քարեկեցության զլսավոր աղբյուր: Բացի մազից, գնահատվում ելին նաև այծերի մորթիները, վորոնցից շինուած եյին գինու համար տկնորներ, վորոնք ծառայում եյին իրբեկ խոշոր ամաններ խմիչքներ պահելու համար, պատրաստում ելին տաք հագուստներ, զլսարկներ ու անկողիններ: Այծերը զոհաբերվում ելին աստվածներին և, ինչպես շատ ոգտավետ կենդանիներ, համարվում ելին մինչև տնգպմ սուրբ, նվիրական կենդանիներ: Նրանք նվիրված ելին զվարճության ու զինու աստված Բաքոսին:

Հանածո դրությամբ պահպանված ըստ պատկերների և ըստ մնացորդների դատելով, կարելի յե կարծել, վոր Փոքր Ասիայի ու հին Հունաստանի բոլոր այծերի նախահայրը քալբենի ալծն ե լեղել, վոր ապրում եր կովկասի, Ղրիմի, Պարսկաստանի և Միջին Ասիայի լեռներում ու կոչվում եր քեզուր այժ: Նա շատ նման է յեվրոպական լեռների քարայծին, վոր մինչեւ այժմս ել պահպանվում ե դեռևս Ալպերում և Պիրինեյան լեռներում. բայց այդ վերջինը, ըստ յերեսութին, չի մասնակցել ընտանի ցեղերի կազմակերպման մեջ, համենալին դեպս պատմական ժամանակներում:

Բեզոպար այծը շափսի կողմից յեվրոպական քարայծի և ընտանի ցեղերի միջին տեղն ե բռնում: Նա ունի

մեծ կորացած յեղջլուրներ, մինչդեռ այծը սովորաբար անեղջուր եւ Յերկու սեռերն ել ունեն մորուք, վորը չունի ալպիական այծը: Մազը մոխրագույն ե, միքիչ շագանակավուն, մեջքի վրա ունի սև շերտ և ունի բոլորովին սև պոչ: Այս վալրենի այծը հիմա լել հեշտությամբ սովորում է և ընտանի ցեղերի հետ միասին տալիս ե խառնազգի սերունդ: Պետք ե կարծել, վոր նա ձեռնասուն ե դարձել հատկապես Արևմտյան Ասիայում անհիշելի ժամանակներում և ամենազլիսավոր ընտանի ցեղերի սկիզբ տվել, սրանց թվում նաև անգորական նշանավոր ալծերի, վորոնք աչքի լին ընկնում յերկար ու բարակ մազով:

Այնուհետև մի փոքր ավելի արևելք, Ավղանստանում, Հիմալայներում ու Միջին Ասիայի բարձր սարահարթերում ապրում ե դարձլալ մի վայրենի արու այծ, վորը, անկասկած, մասնակցել ե ընտանի ցեղերի կազմակերպման: Այդ—այսպես կոչված մակուրն ե, վորն իր չափսով ալպյան ալծին եր նման: Նա աչքի լեր ընկնում յերկար պարուրած վոլորած յեղջլուրներով: Յեկ իրոք հին ասորեստանյան հուշարձաններում մենք գտնում ենք յեղջլուրներով ձեռնասուն այծերի պատկերներ, վոլորած, ինչպես պատուհանի վարագույրը: Ժամանակակից ցեղերի մեջ նրան ամենից ավելի մոտ ե գալիս քիշմիրի ալծը պարուրած վոլորած յեղջլուրներով ու յերկար մետաքսանման մազով, վորից շինում են քիշմիրի հայտնի շալերը: Այդ ցեղը տարածվել ե Բուխարայի վրայով նաև մինչև մեր հարավ-ուուսական տափաստանները:

Դեպի արևելք ավելի հեռու գնալով, մենք հանդիպում ենք ընտանի ալծերի դարձյալ մեկ խմբի, բոլորովին վհչ նման յեվրոպականներին: Նրանք տարբերվում են բարձր գոտներով, մազի մութ գույնով և յուրահատուկ ձևի գլխով կարճիկ ու ծռած յեղջլուրներով: Ըստ բոլոր այս նշանների կարելի լե կարծել, վոր այդ ցեղերի

Նախահայրը վայրենի արու ալծն ե, վոր կոչվում ե քար: Նա պատահում ե Արևելքում Տիրեթի և Հնդկաստանի լեռներում, հատկապես հենց այն շրջանում, ուր տարածված են կարճեղջուր ընտանի այծերի ցեղերը: Ուրիշ վայրենի արու ալծերի աման թարը հեշտությամբ ե ընտելանում ու զուգախառնվում ընտանի այծերի հետ:

Այսպիսով, ըստ յերևութին, ընտանի այծերի նախահայրերը յեղել են քարայծերի միքանի վայրենի տեսակները, վորոնք ապրում եյին զանազան շրջաններում: Զանազան ժամանակներում և զանազան յերկրներում շատ հեռավոր նախապատմական շրջաններում կամ պատմական ժամանակների հենց սկզբներին մարդը փորձեր ե արել ձեռնասուն և ընտանի դարձնել ալդկենդանիներին, վորպեսզի ոգտվի նրանց մսից, մորթիներից, մաղիղ ու կաթից:

Եեթե վոչխարները հանդիսացան իբրև քարեկեցության զիսավոր աղբյուր այն ժողովուրդների համար, վորոնք ապրում եյին հովիտներում ու տափաստանների անսահման ընդարձակության մեջ, ուր նրանք ակամա հետեւով իրենց հոտերին դարձան թափառական-անամապահներ, — ապա այծերն ել հնարավորություն տվին: ուրիշ ժողովուրդների մշտաբնակ լինել լեռներում: Նախնիքներից ստացած ժառանգականության-ամենազիք և անմատչելի ժալուերն իվեր մագլցելու հակումով, նրա դեպի կերակուրն ունեցած անպահանջկոտությամբ և իրենց համար լեռներում ձմեռն ել կեր ձեռք բերելու ընդունակությամբ այծերը լեռների ընակիչների համար դարձան անփոխարինելի ընտանի կենդանիներ: Ընդունակություն: Այծերի հոտերը պահվում են միենուլին տեղերում, շատ-շատ ամառը քշվում են լեռների ավելի քարձր մասերը—ալպիական մարգագետիններում, իսկ ձմեռը ցած են իջնում լեռների ստորոտները:

Ալսպիսով այծերը նպաստեցին լեռների և հովիտ-ների խաղաղասեր հովվական տոհմերին բարգավաճելու և տարածվելու ամբողջ թեվրոպակառում։ Այս ընտանի կեն-դանու անվիճելի կուլտուրական ծառալությունը պատ-մաբանները բավականաշափ չեն գնահատել։

Ավելի ուշ պատմական շրջաններում ընտանի այծը վնչ միայն լախորեն տարածվեց ամբողջ Յեվրոպայում, բռնելով և ամբողջ հարթավայրերի շրջանները և ընկ-նելով հյուսիսային պետությունների մեջ, այլ և յեվրո-պական գաղթականների հետ միասին ներս մտավ և Հյու-սիսային Ամերիկա, վորտեղ նա առաջ չկար։ Այժմ ընդ-հանրապես դարձավ յեվրոպացի գաղթականի մշտական ուղեկիցը և նրա հետ մեկտեղ տարածվեց ամբողջ աշ-խարհում։

Այծերի հոտերը, սակայն, բնավ չեն հասնում այն քանակության, ինչ վոր վոչխարների հոտերն ելին հաս-նում։ Այդ միանգամայն հասկանալի յեւ է կեռները չունեն կերի այնպիսի անսպառելի պաշար, ինչպես վոր ունեն անսահման տափաստանները։ Յերկրագնդի վրա այծերի ընդհանուր քանակն ավելի քիչ ե, քան վոչխարների քա-նակը։ Ամբողջ Յեվրոպայում հաշվում են միայն մոտա-վորապես 20 միլիոն գլուխ այծ, ըստ վորում նըանցից ամենից շատը գտնվում է Միջերկրականի ափերին, Սպանիայում, Իտալիայում և Հունաստանում։ Շատ զո-րեղ կերպով զարգացավ այծութությունը նմանապես և Միջին Յեվրոպայում, առանձնապես Գերմանիայում։ Այս-տեղ խիտ բնակչության և ազատ արոտավայրերի չգոյու-թյան շնորհիվ այծերը հանդիսանում են ամենահարմար ընտանի կենդանիները մանր տնտեսությունների համար։

Մեր մեջ այծերը մինչև վերջին ժամանակները քիչ հարգի ելին, և նրանց քանակությունն ել շատ շնչին, յեթե հաշվի չառնենք կովկասն ու Ղրիմը։ Բայց այս, ինարկե, ամեննեին վնչ ըստ նըանց արժանիքի, քանի վոր

ընտանի այծը և մեզ մոտ կարող եր լինել շատ ողափակետ կենդանի գյուղացիական տնտեսության մեջ:

ԱՅՑԻՆԻ ՅԵՎ ԷՆՏՈՆԻ ԱՅԺԸ

Ժամանակակից վայրենի այծերը, վորոնց մեջ, անկասկած, գտնվում են նաև ընտանի ցեղերի նախնիները կամ մոտիկ նախնիներին և ազգակից սրանց ձևերին, — բոլորն ել լեռնային կենդանիներ են և բացի դրանից բնակվող լեռների ամենաանմատչելի ժայռերի շրջաններում, համբաւենական ձան մերձակալքում: Այս իսկ տեսակետից վայրենի լեռնային այծերն արաակարգ շարժուն, ճկուն մազցողներ են, ունեն զորեղ մկանութ վուներ, վորոնք ընդունակ են թռչելու լայն անդունդներով ու վիճերով: Նրանց հետապնդելու դեպքում նրանք վոչ միայն պահնում են ինչպես մըրիկ՝ զլխամտույտ զարիվերներով, ծերպերով, այլ նաև, ըստ վորսորդների պատմածների, կարող են թռչել և մեծ բարձրություններից, մինչև անգամ ջարդութշուր չլինելով զլիսի վրա ընկնելու պարագային, այս դեպքում նրանց ոգնում են հսկայական ամրակուռ և առաձգական յեղյուրները: Այդ պատճառով ել այդ կենդանիները շատ յերկշուր ու զգայուն են: Իրենց գեղեցիկ, խոշոր աշքերով նրանք հեռվից նկատում են թշնամու մոտենալը: Նրանց ականջները շարունակ սրգած են և ամեն մի կասկածելի աղմուկին վերահասու լին լինում: Նրանք ոժտված են և լով հոտառությամբ: Գաղտագողի մոտենալ քարայծին չափազանց գժվար և, և սպանված քարայծի յեղյուրները հանդիսանում են հաղթական նշան, վորով կարող ե պարծենալ վորսորդը:

Ընտանի այծերը կորցրել են, իհարկե, շատ բան իրենց դյուրաշարժությունից և ձեռներեցությունից: Նրանք յենթարկվել են, ինչպես և վոչխարները, մարդուն և նրա պահանջներին: Մարդու համար ել ամենից առաջ կարեորն այն եր, վոր կենդանիներին իր շուրջը պահեր,

կապեր նրանց իր տան հետ։ Ուստի և նա ընտրել ե ավելի պակաս դյուրաշաբժ և ավելի պակաս ձեռներեց այծերին, ամեն կերպ մոռացնել ե տվել նրանց ինքնուրույնությունը և չափից ավելի սրբնիացությունը։ — Ե՛ վոր այլապես նա ստիպված կլիներ անձամբ մշտապես նրանց յետեից վաղեր։

Պետք ե ասել, սակայն, վոր մարդն այծի վերաբերմամբ ձեռք բերեց շատ ավելի պակաս հետևանքներ, քան թե գոչխարներին ձեռնասուն դարձնելու ժամանակ։ Այծը մինչև այսոր ել պահպանել ե բավականին ինքնուրույն և անկախ ընույթ։ Նա պահպանել ե նախնիներից ժառանգած դյուրաշաբժությունը, վոր արտահայտվում է առանձնապես ջահել հասակում։ Նրան հատուկ ե նույնապես և այն, վոր նա անպարտելի հակումն ունի մագլցելու, և լեռների բացակայության դեպքում նա հաճախ սպրդում ե կտուրների և մինչև անգամ զանգակատան վրա։ Սակայն դրա պատճառները պարզ են։ — Հե՞ վոր իբրև ընտանի կենդանի՝ այծը բուծվել ե մինչև վերջին ժամանակներս գլխավորապես լեռնալին տեղերում, ուր լիակատար կերպով կարող ելին մնացած լինել լեռնալին նախնիներից ժառանգած բնազգները։ Շատ ժամանակ չե, ինչնա իբրև ընտանի կենդանի ընդարձակորեն տարածվել ե հարթավայրերում։

Շատ կարելի յե, վոր դարձյալ մի հանգամանք նպաստել ե, վոր այծը կարողացել ե պահպանել մեծ դյուրաշաբժություն ու շարժումների ճարպկություն։ Մարդը, բազմացնելով այծերին, ինկատի չուներ նրանցից միս ու ճարպ ստանալ։ — նա ոգտվում եր գլխավորապես նրանց կաթից, մազից ու մորթուց։ Դրա համար ել նա չեր աշխատում ընտրանքի միջոցով առաջ բերել ծանը ու վիթխարի այծերի ցեղեր, — այդ հատկությունները չեյին հետաքրքրում նրան։ Հետեանքում այծերը պահպանեցին վոչ միայն դյուրաշաբժությունը, այլև ձեռներեցությունը։

Նրանք իրենց նախնիներին հատուկ բնական խելքն ու զգայնությունը այն աստիճան չեն կորցրել, ինչքան վոշ-խարները. Իզուր չե, վոր վոչխարների հոտերի առաջ-նորդի դերում մենք համախ տեսնում ենք այծին: Իրը առաջնորդ նա լե ընտրում ճանապարհը և ղեկավարում կարգ ու կանոնը:

ԱՅԺԵՐԻ ՑԵՂԵՐԼ

Մարդն սկզբում այծերից պահանջում եր ամեն ինչ բիշ-քիչ. նա պետք ե տար և միս, և մորթի, և մազ, և կաթ: Մինչև մոտիկ անցյալները համեմատաբար քիչ եր հոգ տանում այծերի հատուկ ցեղ բազմացնելու համար. դրա համար ել նրանց ցեղերն այնպես բազմաթիվ չեն, ինչպես ուրիշ ընտանի կենդանիների ցեղերը, և վոչ ել այնպես խիստ կերպով են տարբերվում միւլանցից:

Միջին Ցեղվոպակի այն մասում, ուր առաջացել են ընտանի այծերի բազմատեսակ ցեղեր, հանդիսանում ե ա-մենից առաջ, անշուշտ, Շվեյցարիան, Այնտեղ, Ալպյան լեռ-նաշղթաների վրա, այծերը գտնում են իրենց գոյությու-նը պահպանելու ամենալավ պայմաններ, և նրանց բազմացնելը բնակիչների զբաղմունքն եր կազմում դեռևս անհիշելի նախապատմական ժամանակներում:

Շվեյցարական ցեղերի մեջ գլխավոր տեղը բռնում են զատենիան այծերը, վորոնք բազմանում են Զատեն-նում և Սիմենտալում: Նրանց գլխավոր հատկությունն ոպիտակ գույնն ե, անեղջյուրությունը և արտակարգ կաթնավետությունը: Նրանց մազը կոպիտ ե և կարճ, դը-րա համար ել քիչ ե գործադրվում, — նրանց բազմացնում են գլխավորապես կաթի համար ու նրանից ստացված պանրի համար: Զատենիան լավ այծը տալիս ե որական մինչև չորս լիտր կաթ և ամբողջ տարվա ընթացքում ըս-տացվում ե 800-ից մինչև 1200 լիտր: Այսպիսի կաթնա-վետության համար ալս ցեղը վայելում ե մեծ համակրանք և ներկայումս տարածված ե ամբողջ Ցեղվոպայում: Զատ-նենլան այծեր բազմացնում են և մեջ:

Ապիկական մյուս ցեղերից կարելի յե նշել ըվարցեն-
բուրգյան տափակագլուխ անեղջուր այծերին, վորոնք
ունեն մթին գույն, և սպիտակ ապահնցելյան այծերին,
նաև տագանակագույն թրեյբուրգյան շատ կաթնավետ
այծերին ու սևավիզ վալիլան այծերին.

Առանձին տեսակի այծերի ցեղեր կան նաև Պիրինե-
յան լեռներում. դրանք հսկայական լեղջուրներով են,
յերկար, սպիտակ ու սև մաղերով:

Շատ են գնահատվում իրենց կաթնավետության տե-
սակետից նաև բելզիական կամ ֆլամանդյան այծերը,
վորոնք տարածված են Ֆլամանդիայում և ամենից շատ
ունենում են շագանակի կամ շիկակարմիր գույն:

Վոչ-լենբրոպական ցեղերից առանձնապես գովված
են քիշմիրի այծերը, վորոնք տարածված են Քիշմիրում
(Կաշմիրում) և Տիբեթում. Սրանք խոշոր կենդանիներ են՝
կախ ընկած ականջներով և յերկար պարուրածև վլորած,
դեպի յետ թեքված լեղջուրներով. Նրանց մազը յերկար
և բարակ, մազերի տակ ունենում են չափազանց քըն-
քուշ ու մետաքսանման աղվամաղ, վորը դիմադրում ե
խստագույն սառնամանիքներին, մի հանգամանք, վոր ա-
կամա հաշվի պետք ե առնվի Տիբեթի բարձրաբերձ սարա-
հարթերում. Այծը խուլգում են մայիսին և ընդումին խը-
նամքով բաժանում յերկար մազը քնքուշ աղվամազից,
վորը և հանդիսանում ե ալդ ցեղի գլխավոր արժանիքը:
Ցուրաքանչյուր այծ տալիս ե շատ քիչ աղվամաղ, ուստի և
քիշմիրի շալերն ել, վոր պատրաստվում են հենց արդ աղ-
վամազից, այդպես թանգ արժեն. Այդ շալերը չափազանց
տաք են, թեթև են ու քնքուշ: XIX դարի սկզբին վորձ
փորձեցին կաշմիրի այծերը փոխադրելու Ֆրանսիա, և
մեծ դժվարություններով հաջողվեց այնտեղ հասցնել 400
այծ: Այդ ժամանակվանից այդ ցեղը բողժացնում են
Ֆրանսիայում և մինչև անգամ միքիչ ել լավացրած:

Ասիական մյուս նշանավոր ցեղը հանդիսանում են

անգորական այծերը վորոնց բազմացնում են ՓոքրԱսիայում։ Այս ցեղը գեղեցիկ կազմվածք ունի և աշքի յելնկնում յերկար, կախ ընկած ականջներով և մեծ, գեղեցիկ կերպով վոլորված լեղջուրներ ունեցող ալծերով։ Անգորական այծը սովորաբար սպիտակ գույն ունի և տալիս ե 1,25-ից մինչեւ 2,5 կգ. յերկարության բարակ ու փայլուն մազ։ Անգորական այծերի մաշկը, վոր կիրառվում է կանանց մորթեղենն հագուստների համար, նմանապես շատ ե գնահատվում Յեվրոպայում։ Անգորական ալծերը Սալանիա Սավոյական ալպերը և Ֆրանսիա տանելու փորձերը քիչ հաջողություն գտան, վորովհետև կիրայական պայմանները նրանց համար Յեվրոպայում աննպաստ դուրս յեկան։ Սակայն միանգամայն հաջող անցավ նրանց բազմացնելու գործը Հարավային Աֆրիկայում և Ավստրալիայում։

ԱՅԾԻ ԳՈՒՅՔԻ

Այծերի միքանի ցեղերն ունեն բարակ ու քնքուշ մազ և խիտ, ել ավելի նուրբ ու բարակ աղվամազ, վորով նրանք առանձնապես ծածկվում են ձմեռով։ Գարնանը ալծերը բուրդ են տալիս և այդ ռայծի բարուլը՝ գֆտիկն ե թափվում։ Այդպիսի այծեր վաղ ժամանակներից սկսած բազմացնում են մեր մեջ—Ռըենբուրգի նահանգում և կազմում են այնուեղ ինքնուրույն արհեստի առարկա։ Տեղական բնակչությունը պարապում ե այծի գֆտիկ ձեռք բերելով ու նրանից ամենանուրը մանվածներ պատրաստելով, վորից այնուենտի գործում են իրենց նրբությամբ ու տաքությամբ նշանակոր որբենբուրգան գլխի թաշկինակներ ու շալեր, վորոնք ննուց արդեն հոչակված են մեղանում ու թանգ ել գնահատվում են։

Ռըենբուրգան գլխի թաշկինակների պատրաստությամբ և այծաբուծությամբ պարապում են գլխավորապես Ռուսկ գավառի կազակուհիները։ Հավանորեն դեռևս վաղ

ժամանակներում նրանք այս գործը սովորել են վաչկատուն կալմիկներից կալմիկունիները միշտ կըում եյին իրենց այծերի մազերից պատրաստած գործված թաշ-իկնակներ։ Այդ արհեստը կալմիկունիներից սովորելով, կազակունիները հասցըին այն մինչև նշանակալից կատարելության Պատմում են, վոր նրանք շատ անգամ պատրաստում ելին այդպիսի նրբությամբ խոշոր շալեր, վոր հեղառությամբ տեղափորվում ելին համկիթի կամ մինչև անգամ հունական ընկույզի մեջ։

Այծեր բազմացնում են կազակների ստանիցաներում ամենուրեք ու ծառալում են վոչ այնքան կաթի համար, վորքան հատկապես դֆտիկ ձեռք բերելու համար։ Փերարվարին կամ մարտին կազակունիները, կալմիկունիները և թաթարունիները սանրում են այծերի դֆտիկը, այդ բանի համար գործադրելով յեղջուրից շինած ցանցառ ատամներով սանրեք։ Մի այծից ստացվում է 100 գր. մինչև 300 գր. դֆտիկ և այդպիսի դֆտիկը, վոր հանվում ե կենդան այծից, ավելի լավ և համարվում. նրանից մանում են ամենաբարակ ու գեղեցիկ մանվածք։ Սպանված կամ սատկած ալծի դֆտիկը չի տալիս այդպիսի բարձր հատկությամբ մանվածք։ այդպիսի դֆտիկը ձեռք են բերում զլիավորապես կալմիկները և թաթարները և ավելի ցածը են դնահատվում այն դֆտիկից, վոր սանրում են իրենց այծերից կազակունիները։

Մազից ջոկած դֆտիկն սկզբում միքանի անգամ անց են կացնում ցանցառատամ սանդերքով, ապա խիտ-թանձր առանձնավոր սանդերքով։ Այս աշխատանքը յերկար և կատարվում, այնքան, մինչև վոր ստացվի յերկար թելիկ և մինչև վոր լավորակ թելիկի դֆտիկը կբաժանվի կարճ, վատ, այսպես կոչված «մացորդից»։ Լավ դֆտիկի մազը գործադրվում է զլիսի թաշկինակներ գործելու համար, իսկ մացորդներն ել—գուլպաներ, ձեռնոցներ և այլ ավելի հասարակ գործվածքային ապրանքներ պատրաստե-

յու համար։ Այնուհետև դֆտիկից քոլք են շինում ու նը-
րանից մանում են մանածներ ուղղակի ձեռքով իլիկի
վրա։ Այդ իլիկները շատ փոքր են, ընդամենը 5—18 սմ.
յերկարության, իսկ ինչքան վոր մանվածքը պետք ե բա-
րակ լինի, այնքան ել փոքր իլիկ են վերցնում, վորպես-
զի նա մանվածքը չկտրի իր ծանրությամբ։ Այսնաբարատկ
մանվածքը բոլորովին նման ե սարդի վոստայնին, ստկայն
հաճախ գործածվում ե վոչ այդքան բարակ մանվածք։
Գործվածքային մանածի համար առնում են յերեք թել ու
հյուսում միասին, և միայն այդ ժամանակ նա համարվում
ե բավականաշափ դիմացկուն, վոր հնարավոր լինի գոր-
ծել։ Միաժամանակ մանածի հյուսումի հետ միասին կը-
ծիկներ են կծկում։ Զմաքը դֆտիկից ստացվում ե մո-
տավորապես 600 գրմ. մանվածք, — վորի քանա-
կությունը կբավականացնի լուրաքանչյուր 4 քառ. մետ-
րանոց յերեք գործվածքային թաշկինակի։

Մանվածք պատրաստում են սովորաբար թաթարու-
հիները, իսկ կազակուհիներն զբաղվում են զլխի թաշկի-
նակներ գործելով։ Թաշկինակները գործում են պողպա-
տլա սովորական հելուններով, վորոնց մի ծայրին հազցը-
նում են վոքրիկ զմուռսի գնդակիկ, վորպեսզի գործված-
քի հատերը չթափվեն։ Առանձնապես գնահատվում են այն
թաշկինակները, վոր գործում են սկզբից մինչև վերջը մե-
կի ձեռքով միայն։ Արդեն գործված թաշկինակը լվանում,
մաքը ու ուղենքության թաշկինակներից, վոր պատրաստում են նույնպես դֆտիկից,
բայց վոչ թե տեղում, այլ մոսկովյան գործարաններում։
Նրանք սովորաբար շագանակագույն են լինում։

Իսկական որենքության թաշկինակը բավականին
տաք ե պահում և միենույն ժամանակ շատ թեթև ե և
բունում ե շատ քիչ տեղ։ Այդ գործված թաշկինակները
տեղական կազակ բնակչության համար շատ կարևոր ո-
ժանդակություն են։

III. Խ Ա Զ

ԽՈՉԻ ԺԱԿՈՒՄՆ ՈՒ ՊԵՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Վոչխարի և այծի նման, ընտանի խոզն ել հանդիսանում ե այն հնագույն կենդանիներից մեկը, վորին նախամարդը ձեռնասումն ե դարձրել դեռևս նախապատմական ժամանակներում։ Ընտանի խոզերի վոսկըները գտընվում են ցցերի շինությունների դարաշրջանի շինությունների մնացորդների մեջ՝ տորֆի շերտերում։ «Տորֆավալրի» այդ խոզը միջին չափսի յեր ու բավականին բարակ կազմը-վածքով։ Նրա գանդի կառուցվածքին նայելով, կարելի յե յեղբակացնել։ վոր նա ծագել ե վոչ թե լեվրոպական վայրինի խոզից—վարազից, վոր առաջ ամենուրեք տարածված եր Յեվրոպայում, այլ արևելյան, ասիական մի տեսակից։ Պետք ե կարծել, թե վորեւ մի հնագույն ժողովուրդ նրան բերել ե Յեվրոպա Արևելքից, կամ թե չե նա տարածվել ե արևելքից արևմուտք աստիճանաբար նախապատմական ժամանակներում։

Ընտանի խոզի ամենահավանական նախահայր պետք ե համարել այսպես կոչված շերտավոր խոզը,—վայրենումի տեսակը, վորը տարածված ե Ասիայի հարավ-արևելյան կողմերում տեղական բազմատեսակության շատությամբ։ Այս տեսակի ջահել խոճկորները ծածկված են բազմաթիվ մթավուն ու փալլուն՝ լերկայնությամբ անցնող շերտերով։ բայց հասակավոր կենդանիներն արդեն ալր շերտերը չունեն, անհետանում են դրանք։

Հարավ-արևելյան Ասիայում հատկապես վերտեղ են առաջին անգամ խոզը ձեռնասուն դարձրել, — ալժմս ասել անհնարին ե, սակայն պարզ ե, վոր այդտեղից ընտանի խոզերը տարածվել են ամենուրեք, և դեպի արևելք—

Զինաստան, և դեպի արևմուտք—Առաջավոր Ասիա և Յեղ-
րոպա, և դեպի հյուսիսալին Աֆրիկա։ Սրանցից ել Յեղ-
րոպայում առաջացել են «տոքֆավալրի» խոզերը, վորոնք
Շվեյցարիայում, ինչպես պեղումներն են ցույց տվել,
գոյություն ունելին անփոփոխ կերպով դեռևս հռոմեական
հզորության ժամանակներում։

Սակայն Հյուսիսային ու Միջին Յեղոպայում կան ակ-
նարկություններ՝ թե խոզերի միքանի ցեղերը յելքոպա-
կան վարազից են ծագում և պետք ե կարծել, վոր նույն-
պես դեռևս նախապատմական ժամանակներում այդ կեն-
դանուն ձեռնասուն և ընտանի գարձնելու հաջող փորձեր
են արել։ Վարազը բնակվում եր այն անտառներում, վո-
րոնցով ծածկված եր այն ժամանակ Յեղոպայի մեծ—
մասը, և պատահում եր նույնպես Յեղոպայի հարավում—
Հունաստանում և Իտալիայում։ Նա ընդարձակորեն տա-
րածված ե յեղել նաև մեզ մոտ հարավ-արևմտյան խիտ
անտառներում։ Մեր տարեզիրները հաճախ են նկարա-
գրում «կինճ» վորսալը. մի անուն, վորը տրվում եր
նրան առաջիկ ժամանակներում. այդ վորսորդությու-
նը նույնպես հաճախ պատկերացված է հին Հունաստանի
և Հոռմի արվեստի գանազան հուշարձանների և հիշատա-
կարանների վրա։

Հնտանի խոզի նկարը համեմատաբար ավելի քիչ կա-
րելի յե տեսնել հին հուշարձանների վրա։ Դրա պատճա-
ռը յեղել ե, ըստ ամենայն հավանականության, այն, վոր
Արևելքի շատ ժողովուրդներ բացահայտ արհամարհանք
են տածել դեպի այդ կենդանին, չնայելով նրա ըստ ամե-
նայնի ոգտավետության։ Արաբները, փլունիկեցիները, յե-
գիպտացիները, հրեաները և սկզութացիները խոզն ընդու-
նում ելին վորպես անսուրը կենդանի, համոզված ելին,
վոր նրա մսի գործածումով հիվանդություններ են առաջ
գալիս։ Ըստ հրեական ու մահմեդական կրօնական դրա-
վոր հրահանգների մինչեւ անգամ բոլորովին արգելված եր

խողի մսի գործածությունը կերակրի համար։ Այնուամենախիվ այս ընտանի կենդանին շատ տարածվեց և ներկալում ել նա յԵվրոպական գաղութաբնակների հետ միասին ներս ե թափանցել յԵրկրագնդի բոլոր անկյունները։

ՅԵԳԻՎՈՍՈՒՄ խողարուծությունն արդեն ըավականաչափ ընդարձակ զարգացում ե ունեցել։ Այդ մասին վկայում են խողի նախիքների պատկերացումները, վոր կան ՅԵԳԻՎՈՍԻ պատմության ավելի ուշ ժամանակաշրջանների վրա։

Սակայն և այստեղ խողը համարվում եր վորպես Սեթ չար աստծու կենդանի, այն աստծու, վորն Ոզիրիս բարի աստծու զլխավոր հակառակորդն եր, ՅԵԳԻՎՈՍԿՐԻ համոզումով՝ չար ու նզովքի յԵնթարկված հոգիները ընակվում են խողերի մեջ, և դամբարաններից մեկի վրա մենք դանում ենք, որինակ, մի նկար, վոր պատկերացնում ե, թե ինչպես յԵրկու շնագլուխ կապիկներ քշում են խողի կերպարանքով չարտգործի հոգին վերստին դեպի յԵրկիրը (նկ. 9)։



Նկ. 9. Խող և շնագլուխ կապիկներ, յԵԳԻՎՈՍՈՒՄ
կենդանազիր դամբարանի պատերին։

Խողի հետ ունեցած ամեն տեսակի շփոթումը մարդու դարձնում եր անսուրբ, անմաքուր, և մաքրվելու համար պահանջվում եր լվացում գետի մեջ։ Խողարածները ՅԵԳԻՎՈՍՈՒՄ կազմում ելին մարդկանց մի առանձին դաս, կաստա, վորոնց ամենքն արհամարհում ելին, — նրանց չեր

թույլատրվում մինչև անգամ տաճարները մուտք գործելու:

Հին հունաստանում խողաբուծությունը ծաղկել եր տակավին այն հեռավոր ժամանակներում, յերբ հորինվում ելին հոմերոսի յերգերը: «Վոդիսականի» մեջ մանրամասնորեն նկարագրվում եւ «աստվածալին խողարած» իթակացի Յեվմեոսի տնտեսությունը, վորտեղ ընդարձակ բակի լավ քարաշեն խողափարախներում պահվում ելին 600 խոզ ու 360 վարագ: Համարյա տարին բոլոր այս նախիրներն արածում ելին անտառներում, մնվելով բուսականության վայր ընկած պտուղներով և արմատներով:

Դեռևս հնում ել մշակված կալին նույնպես զանազան միանգամայն խելացի կանոններ խողաբուծության համար: Ալպես, նկատված եւ, վոր խողերն ավելի ժառանգում են վորձի նշանները, քան եզի: Ուստի լավ տոհմիկ կրտած խողը գնահատվում եր շատ բարձր, ու նրանց բազմացնելու համար շատ ջանք ու աշխատանք եր պահանջվում: Այդպես ել հնումը հալանի յեր, վոր չպետք եւ տրվի խողին կերակրելու համար 6—8 խոճկորից ավելի, վորպեսզի չափից ավելի չնիհարեր կենդանին: Արդեն այն ժամանակներում խողին կերակրելու արվեստը կատարյալ զարգացման եր հասել: Հոռմեական խողաբույծները հարկադրում ելին խողերին յերեք որով սոված մասի, իսկ հետո 60 որ թունդ կերակրում ելին նրան կաղինով, գարփով, վայրի տանձով, թուզով և ալյու: Հոռմեական գրող ու փիլիսոփա Սենեկան պատմում ե, թե տեսել ե մնուցած կրտած խոզ, վորը կշռում եր (յեթե փոխադրենք մեր ժամանակակից չափերի) մոտավորապես 400 կղ.

Հին հոռմայեցիները շատ ելին գնահատում խողը և խողաբուծությունը. նրանց մոտ առանձնապես զարգացած եր Գալլիայում (Ներկայիս Ֆրանսիան), վորտեղից Հոռմ ելին հասցնում հսկալական քանակությամբ աղ դրած և ապիստած խողեր ու խողի ճարպ: Վայրենի վարագները կամ

ընտանի խողերն ամբողջապես տապակված ու խոշոր մա-
տուցարաններով մեջտեղ բերելն ամեն մի խրախնձանքի
անհրաժեշտությունն եր: Պետքոնիոսը սատիրաներից մե-
կում ասում ե, վոր յերբեմն արդպիսի տապակած խողը
պլարունակում եր իր վորովայնի մեջ կենդանի կեռնեխ-
ներ և աղամիներ, վորոնք թռչկոտում եյին դահլիճում
իմեծ բավականություն խրախնձանքի մասնակիցների:

Հոգուայեցի զրողների յերկերից մենք իմանում ենք,
վոր հոգմայեցիները շատ լավ ծանոթ ելին խողի մսից պատ-
րասաած ամեն տեսակ ուտելիքների: Նրանք վոչ միայն
ծանոթ ելին խողի բդին, վոր բերվում եր զլխավորապես
Գալլիալից և Սպանիալից, այլ նաև պատրաստում եյին
յերշիկներ ու բարակ յերշիկներ, վորոնք յերբեք նոր ձեռք
բերված ուտելիքներ չելին: Յերշիկները պատրաստում ե-
լին խողի մանրացրած մսից ու ճարպից, խառնելով ա-
րյուն, սխտոր ու զանազան համեմիչ նյութեր: Դեռևս այն
ժամանակներում ել գոլություն ուներ մթերքների կեղ-
ծումը, և յերշիկարարները խողի մսի փոխարեն գործ ե-
լին ածում եշի և մինչև անգամ շան միս:

Կլասսիկական հնության ժամանակներում խողերը
համարվում ելին նույնպես զոհաբերվող զլխավոր կենդա-
նիներից մեկը: Միայն միքանի աստվածների բացառու-
թյամբ, համարյա բոլոր աստվածներին ել կարելի յեր զո-
հարերել խողը:

Հատկապես խողը զոհաբերվում եր Դեմետրե պտղա-
բերության աստվածուհուն ու գինու աստված Դիոնիսին:
Ամենատարբեր ժամանակներում նույնպես զոհաբերվում
եր աստվածներին «յեռյակ» զոհ—բաղկացած յեղից, վոչ-
խարից ու կրտած վարազից: Այս կենդանիների քանդա-
կանիարները հաճախ զարդարում եյին տաճարների կամա-
րակապ սրահները: Այն ժամանակ, յերբ ամեն մի ընտա-
նի կենդանի նվիրված եր վորեւ մեկ վորոշ աստվածու-
թյան, խողը, սակայն, չուներ այդպիսի հովանավոր. և

այս հանգամանքն ել ցույց եւ տալիս, մասամբ, վոր դեպի նա արհամարհանք կար:

Ավելի ուշ գերմանական ժողովուրդների մեջ, իրեւ առավելապես վորսորդ ցեղերի մեջ, վարազը շատ պատվավոր տեղ եւ բռնում առասպելական կենդանիների շարքում:

Գերմանական դրախտում, վարհալում, ընկած հերոսները խրախճանք անելով աստվածների սեղանի շուրջը, սնվում եյին ամենայն որ վերակենդանացող Զերեմնիր վարազի մսով: Ամենաթունդ աղերսանքն անում ելին Հուլիսին բուրսատի վոսկեմազ վարազի անունով, վորը նվիրված եր արեի աստված Թրեյիերին:

Միջին դարերում ընտանի խոզը Գերմանիայում և հարեան լերկրներում ամենասիրված ընտանի կենդանու դիրքն ուներ: Նրա միուր դարձավ ժողովրդական սնունդի գլխավոր մթերքներից մեկը, և լերշիկային արտադրությունը հասավ ուժեղ զարգացման ու կատարելագործման:

Ժողովրդական տնտեսության համար իր կարևոր նշանակությունը խոզը պահպանել և մինչև ներկա ժամանակները: Նա առանձնապես գնահատելի յե նրանով, վոր վերամշակում է եժան բուսական մթերքներն ու մինչև անդամ գանազան դեն զցած բաները, վերափոխելով դրանք հիանալի ճարպի և մսի: Դրա համար ել յուրաքանչյուր բուսական արտադրության տնտեսության մեջ խողաբուծությունը կազմում ե կողմնակի գնահատելի արդյունաբերություն:

ԱՅՑԵՆԻ ԾԵՎ ԸՆՑԵՆԻ ԽՈԶՔ

Եեվրոպակի և Ասիակի վայրենի վարազը, ինչպես և վայրենի խոզերի մեծամասնությունը, ապրում ե տաք ճահճուտներում, մերձափնյա թփուտներում, յեղեզնուտներում և խոնավ ճահճային անտառներում: Մածուցիկ գետնի յերեսով գնալու համար հարմարեցրած են և նրաքառամբակ վերջավորությունները, վոր կարճ են և ու-

ժեղ, շարունակվող և արագ վազքի համար անպետք, բայց դադջ գետնին կալչող ու այնտեղից հեշտությամբ դուրս յեկող՝ Հարթ, սեղմված կողերով մարմինը թույլ ե տպալիս վարագին հաջողությամբ հասնել խիտ թփուտները, իրար շատ մոտիկ գտնված ծառերի կամ մարդկանց համար անանցանելի լեղեզների արանքներից։ Գլուխը, վոր ձղված ե դեպի դունչը, ուժեղ վզի մկանների հետ միասին նպաստում ե նրան փորել փխրուն հողը, հանելով այնտեղից արմաններ ու կոճղեր։ Խոշոր ժանիքները, վոր գուրս են ցցված բերանից, ոգնում են այդ զործում և, բացի դրանից, ծառալում են իրեւ պաշտպանության զործիքներ, վոր սարսափելի լեն և գազանների, և մինչև անգամ մարդու համար։ Իզուր չե, վոր վարագի վրա վորսի լենելը ալժմ ել, մինչև անգամ հրաձգալին զենքերի ժամանակ, համարվում ե ամենավտանգավոր բանը։ Հնումն ել այս կամ այն հերոսի ձեռքով սպանված «կին-ճերի» քանակը հանդիսանում եր նրա համար իրեւ հպարտության ու պարծանքի առարկա։ Նրա մասին խնամքով նշումներ կան տարեգիրներում, և պահպանված ե նա ժողովրդի հիշողության, առասպելների և լերգերի մեջ։

Ընտանի խողերի միջանի ցեղերն իրենց արտաքինով, հատկապես ըիչ «ազնվացըրած» ցեղերը, մինչև այսոր ել դեռևս հիշեցնում են իրենց վալրենի նախնիներին։ Սակայն նրանք բավականին փոխել են իրենց բնութը։ Վայրենի վարագի շարժունությունը, զգայությունը, զգուշությունն անհետացել են ընտանի խողից, և միայն նրա մեջ յերեմն հայտնվող վալրենի կույր կատաղությունը հիշեցնում ե մեզայն մասին, վոր նրա նախնիները լեղել են նախնական վորսորդի ամենավտանգավոր վորսերից մեկը, մինչև անդամ թերես ամենավտանգավորը։

Սակայն վայրենի նախնիների շատ գծեր պահպանված են նուև ավելի մեծ չափով «ազնվացըրած» յորկիր-

ների մեջ։ Այսպիսի գծերից են ամենից առաջ բոլոր խոզերին հատուկ՝ դեպի ցեխն ու կեղտն ունեցած ձգտումը, ճիշտն ասած՝ վհչ դեպի իսկական ցեխը, այլ դեպի վոտքերի տակ մածուցիկ ճահճոտ գետին ունենալու ձգտումը։ Այսպիսի հողի վրա խոզն իրեն զգում ե ինչպես իր տանը, այն ժամանակ յերբ ամուր քարաշատհողը նրա համար տհաճ ե լինում, նա միշտ աշխատում է ընկնել այնտեղ, ուր հողը փափուկ ե։

Վարազից ժառանգած մյուս գիծն ե խոզի ամենակերությունն ու անխարականությունը կերակրի մեջ։ Եեթե կերակրի մեջ հատուկ ընտրություն անելու լինի, այն ժամանակ նա գետինը փորփրելու համար բավականին ուժ կվատնի. և վարազը միակերպ հաջողությամբ կլանում ե այն ամենը, ինչ վոր հաջողում ե հանել գետնի տակից. — ընկած կաղիններն ու ընկույզները, բույսերի արմատներն ու կոճղերը, մկների բունը, անձեռային ճիճունները, կակղամորթները և մայիսյան բզեզների թըրթուրները, — ահա այդ բոլորը նրա ավարն են դառնում. վոչ մի բանից նա չի հրաժարվում։ Նույնչափ ել կերակրի մեջ անպահանջկոտ ե և ընտանի խոզը։

Այս նրա ամենակերությունը, նույնպես և առատորեն կերակուր կլանելու, լափելու հատկությունը և կերակրի հավաքումը — ճարպի կուտակման ձևով — (վարազի համար այդ ծառայում ե իրեն պաշար ձմեռվա քաղցի ժամանակ) ամենաընդարձակ չափով ողտագործեց մարդը։ Նա խոզը դարձրեց մի շարժական գործարան, նրա տնտեսության բոլոր անպետք մնացորդներն ու դեն դցվածները վերամշակելով արժեքավոր մթերքների — խոզի համեղ մսի ու ճարպի։ Իզուր չե, վոր մեր մեջ խոզը կոչվում ե «գյուղացու գանձանակը»։

Իհարկե մննդարար մթերքների այգալիսի պահեստի փոխարկվելը իր յետեմից առաջ բերեց շարժունության կորուստ, ձեռներեցության վոչնչացում, բոլոր դրայս-

քանների որդանների ցածրացում, նմանապես և մտավոր ընդունակությունների իջեցում,—հատկություններ, վոր անժխտելիորեն ունի խողի նախնին—վարագը:

ԽՈՂԵՐԻ ՑԵՂԵՐԸ

Մարդը միշտ բազմացըրել ե խողերը միմիայն նրանց մուի և ճարպի պատճառով և ուշադրություն դարձրել գլխավորապես այն ըանի վրա, վոր նըտնք արագությամբ մնվեն, ըստ հնարավորության շատ քանակությամբ մթերք-ներ տան և ինչքան կարելի յե ավելի շատ աճեն-բազմանան: Այս միակերպ պահանջների շնորհիվ ել մենք խողերի մեջ նկատում ենք վոչ այնքան շատ ցեղեր, և նրանք միմյանցից այնքան ել չեն զանազանվում:

Ամենահին ցեղերից մեկը Յեփոպակում յերկարականի խողերն են, վորոնք սովորական են և մեղանում՝ հյուսիսային ու միջին նահանգներում: Այդ խողերը խոշոր են, նրանց կշիռը հասնում է $2 - 2\frac{1}{2}$ ցենտների, շատ բեղմնավոր են, բերում են մինչեւ $10 - 12$ խոճկոր միանգամից, անպահանջկոտ են կերակրի մեջ, տոկուն են և կարիք չեն զգում առանձին խնամատար վերաբերմունքի: Նրանց գլխավոր առանձնահատկությունն են յերկար, աչքերի վրա կախ ընկած ականջները: Այս ցեղն առաջուց շատ առաջածված եր ամբողջ Յեփոպակում, բայց այժմ նա Արևմուտքում տեղի յե տվել անգլիական ավելի ազնը վագրած ցեղերի առաջ և պահպանվել ե գլխավորապես մեզ մոտ և կենաստանում:

Մուսական յերկարականջ խողերի մեջ հանդիպում ենք մի նշանավոր ցեղի, վոր հազվագյուտ չե Բելոռուսի-ալում և հարավ-արևելյան նահանգներում: այդ միասըմբակ խողերն են: Նրանց վոտների սմբակը յերկճղանի չե, ինչպես մյուս բոլոր ցեղերինն ե, այլ միասին, կապած են առում, ընդունակ միացման տեղում նկատելի յե գիծը, և վոտների կմաքսի վոսկը ընելի միացած են թվում:

Ալղակիսի խողեր, սակայն, տակավին հնումն ել հայտնի ելին. Նրանց մասին խոսում են Արիստոտելն ու Պլինիսը:


Հին ծագում ունեցող յեվրոպական խողերի մի այլ ցեղն են կարնականց խողերը, վորոնք տարածված են Գեղսանիալում, Լեհաստանում և մեզ մոտ հարավ-արև-մուտքում: Այս ցեղի ականջները փոքր են, ուղղաձիգ: Սրանք ել նույնպես շատ բեղմնավոր են և միքիչ ել ավելի շատ են բուծվում, քան յերկարականջները: Նրանց չափսն ավելի փոքր են, նրանց ծանրությունը սովորաբար 1 ցենտներից (100 կգ) չի անցնում:

Խողերի միանգամայն ինքնուրույն ցեղեր հատուկ են Արևելյան Ասիային, և առանձնապես մեզ համար հետաքրքրական են չինական խողերը, քանի վոր նրանք հանդիսանում են ժամանակակից ամենալավ ցեղերի նախահայրերը: Չինական խողերը կարեոր են յերկարավուն կլորացած իրանով, կարճ զլիսով ու դնչով: Քննուց ու բարակ խողամազով վոր հաճախ գանգուր ել լինում: Այդխողերն արագ կերպով գերանում են, բայց մեր պայմաններում քիչ են պետքական, վորովհետև ցրաի և խոնավության նկատմամբ շատ զգայուն են: Դրա համար ելնրանք մանր են և առանձնապես ել բեղմնավոր չեն:

Շատ ժամանակից իվեր Անգլիայում խողաբուծությունը ծաղկել եր. և բազմացնում ելին առավելապես յերկարականջ խողեր: Սակայն անգլիացիներն այնքան են սիրում խողը և այնպես պահանջկոտ են նրա հատկության նկատմամբ, վոր այդ ցեղը նրանց չեր կարող բավարարել: Անգլիական խողաբուժները դեռևս XVII դարուց սկսեցին աշխատել բարելավելու ցեղը՝ խոնամքով ընտրանք կատարելով սկզբում հենց ցեղի միջ, ապանրա և այլ ցեղերի միջև զուգախառնություն առաջացնելով: Ցերք նրանք ծանոթացան չինական խողերին, վոր Անգլիա ելին հասցնում նավերով, այն ժամանակ չանացին:

Նրանց ել ոգտազործել ցեղի բարելավման համար, և ալդ նրանք հաջողեցին յերկար աշխատանք թափելուց հետո,— Յորկի կոմսութիւնն մեջ առաջացրել են անգլիական սպիտակ ցեղը, վորն ստացել եւ յորկշիրյան կոչումը (նկ. 10):

Յորկշիրյաններն ալժմ գոյություն ունեցող ամենալավ ցեղերից մեկն են: Այս շատ խողոք խողեր են, յերկար կլոր մարմնով, կարճ դլխով և կարճլիկ ու բութ դնչով: Նրանց գույնը միշտ սպիտակ եւ Նրանք ծածկը վարժած են յերկար ու բարակ խոզամազով: Վարագների ծանրությունը հասնում է $5\frac{1}{2}$ ցենտների, նրանց յերկարությունը լինում է մի սաժենից ավելի (185 սանտիմետր), և արդեն մի տարեկան վարագները կշռում են յերեմն մինչև $2\frac{1}{2}$ ցենտներ:




Նկ. 10. Սպիտակ յորկշիրյան խող:

Այդ խողերը տալիս են հիանալի միս ու ճարպ, ընդունին ձեռք են բերում և ամենալավ, անգլիացիներից առանձնապես գնահատված «բեկոնը», այսինքն բարակ միշտախավերով ճարպ ունեցող խողի միսը:

Խողերի յորկշիրյան ցեղը կարճ ժամանակամիջոցում տարածվեց վոչ միայն ամբողջ Անգլիայում, զուգախառ-

նման միջոցով մի ամբողջ շարք տեղական ցեղեր տալով, այլ մինչև անգամ նվաճեց ամբողջ Յեվրոպան։ Զուտ յորկշիրներ կամ նրանց ու տեղական խողերի խառնուրդները կարելի յե գտնել խողաբուծությամբ պարապող յեվրոպական յուրաքանչյուր տնտեսության մեջ։ Շատ ընդարձակ տարածվել են նրանք և մեղ մոտ, ուր նույնպես ընդունված են վորպես շատ ավելի արժեքավորներ տընտեսության համար։



Նկ. 11. Սկ բերկեիրյան վարագ։

Բացի սպիտակ խողերից՝ Անգլիայում առաջացրել են դարձյալ սև խողեր, վոր կոչվում են բերկեիրյան խողեր կամ բերկշիրներ (Նկ. 11)։ Նրանք ավելի փոքր են յորկշիրներից և չունեն այնպիսի գնահատելի հատկություններ, սակայն ավելի դիմացկուն են և ուրիշ ցեղերի հետ միասին հեշտությամբ են խառնուրդ տալիս, բարձրացնելով նրանց հատկությունները։ Նրանք աչքի յեն ընկնում վոչ միայն սև խողամազով, այլ նաև կաշու սև գույնով։ Այս հանգամանքը, իմիջի այլոց, խիստ մնասել ե նրանց ընդարձակորեն տարածվելու մեղ մոտ, ուուս գնողները չեն սիրում այն աղղթերը, վոր արտաքինից սև գույն ունեն։ Առաջվան ժամանակներում բերկշիրները

մեղ մոտ ել եյին բուծվում, սակայն այժմս միանգամայն տեղի յեն տվել լորկիրների առաջ:

Դերջին ժամանակներս անդիմական խոզաբուծության առաջացրել են մի նոր խայտարդիք կամ գլուտերլան խոզերի ցեղ, նմանապես բազմացրել են շերտավոր կամ թե չեղեղել բեկյան խոզեր:

Այսպիսով շնորհիվ խոզաբուծության յերկարատև ու համառ ջանքերի, հաջողվել ե մանը ու քիչ յեկամուտերերող խոզից ստանալ չափաղանց խոզոր և ողտավետ ցեղեր: Խելացի խնամատարության դեպքում նրանք վերադարձնում են դործազրված ըոլոր ծախսերի հարյուրապատիկու:

ԽՆԶՊԵՍ ԵՆ ԽԱԶՄՅՈՒԹ ԽՈԶԵՐԻՆ

Խոզը մի կենդանի յե, վոր ամենից շատ կապված ե տան հետ. սովորաբար նրա ամբողջ կյանքն անցնում է խոզաբներում և խոզերի բակում: Սակայն միանգամայն անողուաւ ե խոզերին մշտապես փականքի տակ պահելը: Շատ ավելի լավ հետեւանքներ են ստացվում այն ժամանակ, յերբ խոզերը բազմացնում են ազատության մեջ, բնական կամ արհեստական արոտավայրերում: Մաքուր ոդի մեջ շարժուն վիճակում գտնվելու և բավական թարմ կերակրով սնվելու հանդամանքը, իլրացումն արհեստական կերի, նպաստում ե խոզի որդանիզմի ամրապնդմանը,—նա դառնում ե առողջ և ուժեղ: Ուստի և լավ խոզաբուծաբաններում խոզերին միշտ բաց են թողնում արտաները և մինչև անզամ (նրանց համար) հատկապեսցանում են վիկի և առվույտի արտեր, իսկ Ամերիկայում—չեղիպատացորենի կամ ասպաստի(կապույտ առվույտ) արտեր, վորպեսզի այդ տեղերում նրանց կերակրեն: Վորպեսզի խոզերն արտերը չփչացնեն, քարուքանդ չանեն իրենց դնչով, ինչպես առհասարակ այդ անում են նրանք, նրանց դունչը յերկաթե ողի մեջ են դնում:

Խոզաբուծության գլխավոր նպատակն եւ, հարկավ, խոզերին սեռցանելը. դրա համար ել նրա կերի վրա առանձին ուշադրություն են դարձնում, և մշակված են զանազան կերերի վորոշ քանակություններ, վոր պետք եւ տրվեն խոզերին, վորպեսզի հետեանքները լինեն շատ ավելի բարեհաջող: Միանգամայն սխալ են մտածում շատերը, թե խոզերին այնքան կեր պիտի տալ, ինչքան նրանք ցանկանում են, առանց վորեւե չափի: Իսկական վորձերը ցույց են տվել, վոր կերակրելու այդպիսի յեղանակի դեպքում խոզն ավելի քիչ միս ու ճարպ եւ տալիս, քան այն դեպքում, յերբ ստանում եւ ճիշտ հաշված կերակուր, վորոշ բաժիններով ու հայտնի բաղկացուցիչ մասերով: Յուրաքանչյուր հասակի խոզի համար գոյություն ունեն կերակրի քանակության աղլուսակներ, և յավանտեսություններում խոզերի կերը խնամքով կշռում են ըստ հայտնի դեղատոմսերի, վորպեսզի նրանք կերակրի ամեն մի տեսակն ստանան ճիշտ այնքան, ինչքան վոր հարկավոր եւ:

Խոզն ամենակեր կենդանի յեւ և ուտում եւ բուսական ու կենդանական ծագում ունեցող ամեն տեսակի կերակուր: Հատուկ լավ կերակուր են համարվում խոզի համար գարին ու յեգիպտացորենը, ճակնդեղը, դազարն ու կարտոֆիլը: Բացի զրանից խոզերի համար իբրև կերակուր են ծառայում նաև ամեն տեսակ դեն զցված բաները.— Չինուկը, վոր ստացվում եւ կարագ հալելուց հետո՝ կաթից, թեփը, քուսպը, գարեջրի գործարանների շանչը, շաքարի գործարանների ճակնդեղի ծորը, խոհանոցի ավելցուկները, վերջապես, արյունից, մսից ու ձկնից պատրաստած փոշի—մթերքներ, վոր հատկապես պատրաստում են Անգլիայում ու Գիրմանիալում խոզերի կերի համար: Այդ բազմապիսի մթերքներից վերցնում են, անցուշտ, նրանք, վոր հեշտ են ձեռք բերվում և վոր ձեռքի տակ կան: Դրանք վորոշ յեղանակով խառնում են

ու պատրաստում են խառն կեր, մանրացնելով և յեր-
բեմն ել լուծելով ավելի լավ դրուքամարսության համար:

Շատ կարևոր ե, վոր կերը թարմ ու համեղ լինի և
որական միքանի անդամ տրվի. բացի դրանից, ինչքան
վոր ջահել են խոզերը, այնքան ավելի հաճախ պետք ե
սահանան կերակուրը: Ջահել խոճկորներին կերը տրվում
և որական 6—8 անգամ, մինչդեռ ծերացած խոզերն ըս-
տանում են այն 3 անգամ: Խոճնըստինքյան հասկանալի-
լե, վոր բացի կերից խոզերը պետք ե ունենան նաև մա-
քուր թարմ ջուր:

Վորպեսզի իմացվի, թե խոզերն արդինք բավականա-
չափ կեր ստանում են, լավ տնտեսությունների մեջ սրանց
հաճախ կշուռում են, հետեւանքները զրի առնում: Ցեվ հա-
մապատասխան այն բանի, թե ավելանում ե արդյոքնոր-
մալ կերպով խոզի կշիռը, թե չե,—ըստ այնմ ել կերի բա-
ժինը մեծացնում են:

Մեծ նշանակություն ունի և այն շենքը, վորում տե-
ղափորվում ե խոզը՝ առանձնապես մեր ցուրտ կիմալում: Խոզաբունը պետք ե լինի բավականաչափ ընդարձակ, տաք
ու լավ քամահարած—ոդը մաքրած: Բոլորովին իզուր են
կարծում, վոր խոզը կեղտոտ կենդանի յե և կեղտից չի
տուժում: Խոզերը, հատկապես տոհմիկները, հեշտությամբ
հիվանդանում են, յեթե նրանց չափից ավելի կեղտոտ են
պահում: Խոզաբունը մաքրությունը պետք ե լինի ան-
հրաժեշտ պայման: Սովորաբար լավ խոզաբուծարաննե-
րում խոզաբունը շինվում ե ցեմենտի հատակով, վորի
վրա սարքվում ե փայտա ծածկոց, վորպեսզի խոզերի
համար ավելի տաք լինի: Ձմեռվա համար խոզանոցներում
վառարաններ են դրվում: Սրա հետ մեկտեղ հոգ են տա-
նում և ողը մաքրելու վրա: Ցուրաքանչյուր խոզ տեղա-
վորվում ե հատուկ շինած տեղում, ուր զրված ե և կերի
ամանը: Սրա մեջ լցնում են կերը: Խոզանոցի առաջ շին-
վում ե խոզերի մանգալու համար բակ: Հոզատար խո-

գաբուլիծներն ինկատի ունենալով այն, վոր խոզերը քոր-
վելու սովորություն ունեն, այդպիսի բակերում դնում
են մինչև անգամ հատուկ խոզի-սանրեր:

Ըսդհանրապես խոզերի բուծման ժամանակ, ինչպես
և բոլոր ընտանի կենդանիների բուծման ժամանակ, պետք
է հիշել, վոր խոզը կենդանի եյակ ե, վորն իր զարգաց-
ման ու աճման համար պահանջում ե լավ արտաքին պայ-
մաններ և, ամենից առաջ, բավականաշափ քանակությամբ
հարմար, հեշտ մարսվող ու սննդարար կերակուր: Ցեթե
նրա համար այդպիսի պայմաններ ստեղծվեն, այն ժամա-
նակ յորկշիրան ցեղի լավ խոզը կաճի ուղղակի վոչ թե
որերով, այլ ժամերով, —որական նա կարող ե ավելանալ
600-ից մինչև 700 գրամ և տարեկան կարող ե հասնել
250 կգ.:

Աժենաեժան բուսական մթերքներից արագությամբ
փոխարկվելով թանգ արժեցող մսի ու ճարպի՝ խոզը հան-
դիսանում ե ամենաոգտավետ ընտանի կենդանիներից
մեկը, և խոզաբուծությունը ամեն մի լավ դրած տնտե-
սության համար պետք ե հանդիսանա վորպես ոժանդակ
արդյունաբերություն: Մեզ մոտ դժբախտաբար այն դեռ-
ևս թույլ ե զարգացած: 1916 թվականի հաշվառման հա-
մաձայն Ռուսաստանում ընդամենը հաշվում եյին ամեն
հասակի 21.438.000 խոզ, սրանց թվում միայն մեկ տա-
րեկանից բարձր 6 588 000 խոզ: Ցեթե հաշվինք, թե ինչ-
քան խող ե գալիս մեր ամբողջ դյուդացիական բնակչու-
թյան վրա, այն ժամանակ կերեա, վոր գյուղական բնակ-
չության ամեն մի 100 հոգուն գալիս ե միայն ամեն հա-
սակի 21 խոզ, կամ մի տարեկանից բարձր 11 խոզ, այ-
սինքն մոտավորապես 10 մարդուն ընկնում ե միայն մեկ
խոզ: Ուրիշ պետությունների համեմատությամբ այդ շատ
քիչ ե: Այսպես՝ Գերմանիայում 4 մարդուն գալիս ե 1
խոզ, իսկ Դանիայում՝ մինչև անգամ համարյա տմեն մի
բնակչին 1 խոզ (90 խոզը 100 բնակչին):

ԽՈՉԵԲԻ ՀԻՎԸՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խողերը դանազան հիվանդություններ ստանալու շատ տրամադրի են, և այդ հիվանդություններից միքանիսը կարևոր նշանակություն ունեն և մարդու համար, քանի վոր նա չել դրանցից կարող ե տուժել: Բացի դրանից խողերի վարակիչ հիվանդությունները խողաբուծությանը պատճառում են հսկայական զնաներ. հաճախ ալդ հիվանդություններից վոչչանում են հարյուր հազարավոր դուխ խողեր:

Միայն խողերին հատուկ վարակիչ հիվանդություններից ամենից առաջ կարելի յե նշել խօղերի կարմիր բամին—ռոժան: Այդ հիվանդությունը տարածված ե ամենուրեք և վարակում ե ամենից առաջ ջահել խողերին: Այն գոյանում ե մանր միկրոսկոպիկական գոյակներից, միկրոբներ, վորոնք շատ հեշտությամբ անցնում են կերակրի, ջրի միջոցով կամ ուղղակի շփման ճանապարհով:

Նույնչափ, յեթե վոչ ավելի ավերիչ հիվանդությունների չուման—ծանօթախտը, վորովնմանապես հիվանդանում են զլխավորապես ջահել խողերը: Այս հիվանդությունը շատ վարակիչ ե, այնպես վոր հիվանդացած կենդանիներին պետք ե խիստ կերպով հեռացնել առողջներից: Բարեբախտաբար յեթե խողը մի անգամ արդեն ժանտախտը կրել ե, այլևս նոյն հիվանդությամբ չի ըռնվում:

Խողերին յուրահատուկ են նաև այնպիսի հիվանդություններ, վորոնցով տառապում են և ուրիշ ընտանի կենդանիներ.—դաբաղը (կամ դնչա-սմբակային հիվանդություն), սիբիրախտը և տուբերկուլյոզը:

Առանձնակի նշանակություն ունեն մարդու համար խողերի այն հիվանդությունները, վորոնք գոյանում են նրանց մարմնի մեջ աեղավորված տղրուկներից, վորովնետե միենուին տղրուկներով կարող ե վարակվել և մարդը:

Ամենից առաջ մարդու համար վտանգավոր ե խողե-

բի ՏԵՂԻՄԻՆԱԽԻՏԸ—ՏԵՂԻՄԻՆՈՂԸ—մի հիվանդություն, վորպայմանավորված ե խողի մարմի մեջ թափանցող մանր, աչքին աննկատելի ճիճուռերով—արիխիններով։ Տըրիխինները խողի մեջ ընկնում են ամենից շատ ընտանի մեծ մկների—առնետների և մկների մսի հետ միասին, վորոնց խոզն ուտում ե, ինչպես և ամեն տեսակ մսեղեն՝ ինչ վոր նրան պատահում ե։ Յերբ վոր տըրիխիններով վարակված առնետի միսն ընկնում ե խողի ստամոքսի մեջ, նրանից դուրս են գալիս աղիքալին մանր տըրիխիններ։ Նրանց մեջ լինում են վորձեր ու եղեր. նրանք սկսում են աճել ու բազմանալ, և եզր լուրս աշխարհ ե բերում մանրիկ կենդանի ձագուկներ մինչև 2000 հատ։ Մողի աղիքներից, ուր վոր նա առաջանում ե, նրանք թափանցում են արյունատար յերակների ներսը, վորոնք տնցնում են աղիքի պատերով, քշվում արյան հոսանքով ու տարվում կենդանու մկանները, ալսինքն մտնում են նրա մսի մեջ։ Մոի մեջ տըրիխինների բեղմանավորումը տեղի յե ունենում մկանալին նյարդերի ներսում։ այստեղ միքիչ աճում են, կուչ են գալիս, կծկվում ու ծածկվում թաղանթով, վորը յերեմ մնվում ե կրով։ Այսպիսի զրությամբ վոլորուն տըրիխինների այդ տզբուկները կարող են խողի մսի մեջ մնալ շատ տարիներ։ Նրանք ըստ յերեսութին խողի առողջությանը վոչ մի աչքի ընկնող ֆլաս չեն պատճառում, և տըրիխիններով վարակվելու հանգամանքը սովորաբար կենդանու համար անվաս ե անցնում։ Այսպիսի ՏԵՂԻՄԻՆԱԽԻՏԸ վարակված խողի միսը, սակայն, ինչպես յերեսում ե, մարդու համար չափազանց վտանգավոր ե։ Յեթե մարդը ուտի այն վոչ բավականաչափ տապակված կամ յեփված վիճակում, այն ժամանակ նրա աղիքներում բոլորովին միենուին բանն է կատարվում, ինչ վոր խողի աղիքներում։ Ճիշտ ալղակես ել ստամոքսային հյութի աղղեցության ներքո լուծվում են պարուրած վաթաթված ջահել տըրիխինները, և նրանց միջից դուրս են գալիս այդ տըր-

բուկները։ Նրանք աճում են, բազմանում են աղիքներում, և նրանցից առաջացած սաղմն ընկնում ե արյան մեջ ու տարվում արյան միջոցով մարդու մկանները։ Յերբ վոր նրանք դուրս են գալիս արյունատար անօթներից և մըտնում են մկանալին նլարդերի մեջ, մարդը սարսափելի ցավեր և սարսափելի տենդալին վիճակ է կրում։ Տըիխիններով լիակատար վարակվելու դեպքում մարդը հաճախ կորցնում է իր կլանքը։ Առաջվան ժամանակներում, այն յերկրներում, ուր խոզի միս շատ ելին ուտում, որինակ Գերմանիայում, հաճախ տեղի լին ունեցել իսկական տրիխինողի—արիխինախտի համաճարակներ, վոր գերեզման են իջեցրել շատ մարդկանց։

Այն ժամանակվանից սկսած, յերբ հաջողվեց գտնել տրիխինը և ծանոթանալ նրանց կլանքին ու մարդկանց նրանցով վարակվելու յեղանակներին, հենց այդ ժամանակ ել զանվեցին նաև այդ հիվանդության դեմ պարբերու հաջող յեղանակներ։ Բոլոր խոզոր քաղաքներում հիմնվեցին հատուկ կայաններ խոզի մսի հետազոտության համար։ Յուրաքանչյուր մորթած խոզի նմուշը, վոր տարվում ե այդպիսի մի կայան, միկրոսկոպով մանրագնին հետախուզման ե յենթարկվում, և յեթե այդպիսի հետազոտության ժամանակ մսի մեջ յերևան գան մեկրոսկոպով լավ նկատելի տրիխիններ, այն դեպքում այդպիսի մորթած խոզն ամբողջապես վոչնչացվում ե, վորպեսզի վարակը չտարածվի։

Այսպիսով շնորհիվ այն հանդամանքի, վոր տրիխիններով վարակված մորթած խոզը վոչնչացվում ե, այդ պարագիտներն սկսում են նվազել քանակով, և տրիխինոզն ավելի սակավ ե յերևան գալիս։ Բանն այն ե, վոր հենց մորթած խոզերի միջոցով են վարակվում իրենց հերթին և առնետները, —նրանք ուտում են սպանդանոցներում դանաղան թափթփուկներ, վորոնց մեջ կարող են ընկած լինել տրիխիններ, վարակված մորթած խոզերի վոչնչաց-

ման դեպքում այլևս առնեաները տրիխիններով չեն վարակվում, խոզերն ել հնարավորություն չեն ունենում վարակված առնեաներ ուտելու, իրենք չեն վարակվում և խոզի մասով մնվող մարդու կյանքին ել վտանգ չեն սպառնում:

Մարդու համար ավելի պակաս վտանգավոր, սակայն նույնպես հաճախ խիստ անհաճո հետևանքներ առաջացնող ե հանդիսանում խոզի այն միսը, վորի մեջ գտնված են լինում «Փինկաներ» կամ, ավելի ճիշտ, «Փիննաներ» — ֆիննախտով (խոզախտով) վարակված միսը: Այդ պարագիտները հասարակ աշքով նկատելի յեն. նրանք հեղուկով լցված փոքր սպիտակ փամփուշտիկների տեսք ունեն, և նրանցից լուրաքանչյուրի մեջ կա խոզի յերկպորդի (սոլիտեր) գլխիկ. այդ յերիզորդն ե, վոր մեծացած դրությամբ բնակություն ե հաստատում մարդու աղիքի մեջ:

Ցեթե մարդն ուտի այնպիսի միս, որինակ՝ չորացրած կամ ապիտած դրությամբ, յերբ յերիզորդի բոլոր սաղմերն ել տաքության միջոցով սպանված չեն, այն ժամանակ նրա ստամոքսում ֆինկաների փամփշտիկնեւ ուռչում ե, գլխիկը դուրս ե շրջվում, և հետո փամփշտիկը տրաքվում ե: Գլխիկը կերակրի հետ միասին մտնում ե աղիքի մեջ, կպչում ե նրա պատին՝ իր առաջի կողմում ունեցած փոքրիկ ճանկերի և ծծիկների միջոցով: Հենց վոր նա կպչում ե, սկսում ե աճել ու յերկարել իր յետակը մասով, և այնտեղ մեկը մկուսի յետեկը առաջանում են յերիզորդի — սոլիտերի անդամիկները (պրովլուսիները): Նրանք վերջիվերջո կազմում են մի յերկար շղթա, վորն ունենում ե միջանի մետք յերկարություն: Այդ տղրուկը մնվում ե այն կերակրով, վորը կուլ ե տալիս ու մարսում ե իր աղիքներում մարդը: Այսպիսսավ մարդուց խլում ե սննդի մի մասը, և սոլիտերով վարակվածը նիհարում ե և զժգունում: Բացի դրանից ազրուկը մի վորոշ աստիճան թունավորում ե մարդուն իր արտաթորումներով, այնպես վոր յերևան են գալիս աղիքալին խանգարման նշաններ, փսխումն ու փորի մեջ ել ցավեր:

Իր հերթին մարդն ել ե վարակվում խոզի սոլիտերով, կամ ավելի ճիշտ—ֆինկաներով. Սոլիտերի յետևի մասի անդամիկները, վոր նստած են աղիքներում, ճեղքում ու դուրս են դալիս կղկղանքի հետ միասին: Նրանք լիքն են ամենամանը ձվաներով, վոր տարածվում են ջրի միջոցով, և ամենուրեք ցիրուցան լինում քամու միջոցով: Յեթե խոզը կուլ տա դուրս յեկած սոլիտերի անդամիկները, կամ յեթե նրա աղիքների մեջ ընկնեն կերակրի հետ միասին նրա մանը ձվաները, այն ժամանակ նրա աղիքներում նրանցից դուրս կգան սոլիտերի մանրիկ սաղմերը: Նրանք արյան մեջ են թափանցում և արյան հետ միասին ընկնում են մկանների (մսի) մեջ, սրտի մեջ կամ կենդանու այլ որդանների մեջ: Այնտեղ ամեն մի սաղմից հետզհետե զրդանում և փամփշտակացին ձեր—ֆիննան:

Յեվ ճիշտ այդպես ել, ինչպես և տրիխինների նկատմամբ, յերբ մի շարք գիտական հետազոտումների դիտողությունների ու փորձերի միջոցով հաջողվեց պարզել, թե ինչպես ե առաջանում մարդու և խոզի սոլիտերով վարակումը, հաջողեց մի բան անել և այս չարիքի դեմ: Յերեաց, վոր անհրաժեշտ ե միայն բոլորովին հրաժարվել խոզի հումք ու գործադրել այն բացառապես տապակած կամ յեփած դրությամբ, վորպեսզի միանդամայն ապահովիի սոլիտերից:

Միենառ կայարանները հենց, ուր նայում են խոզի միսը տրիխինի համար, ուշադրություն են դարձնում և այն բանին, վորպեսզի ծախու չհանվի ֆիննախտով միսը: Ֆինկաներով բռնված մորթած խոզի վրա դնում են կարմիր զրոշմ (շաեմպել), վոր նախադգուշացնում ե վարակման հավանականությունների մասին, յեթե միսը գործադրվի հումք կամ ապիստած:

Այսպիսով խոզի հիվանդություններն այժմս մարդու համար սարսափելի չեն, գիտությունը նպաստել ե իմանալու նրանց պատճառները, և այժմս այն բանի համար, վորպեսզի մարդ զերծ մնա հիվանդություններից, անհրաժեշտ ե լոկ ուշադրություն և զգուշություն:

IV. ԱԱԳԱՐ

ԱՅԴԵՐԻ ԺԵԳՈՒՄՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սրանից առաջ յեղած մեր դիտողության առարկա դարձած բոլոր ընտանի կենդանիները հանդիսանում են մարդու ընդարձակորեն տարածված ու մշտական ուղեկիցը նրանք պատահում են աշխարհի բոլոր մասերում և բացի դրանից հայտնի եյին արդեն խորին անցյալում։ Ճագարի մասին այս ասել չի կարելի։ Ճիշտ ե, նա ներկայումս շատ տարածված ե Արևմտյան Յեվրոպայում, բայց մեզ մոտ, որինակ, հենց նոր ե ներմուծվում, ու դեռ հեռու յե այն ժամանակը, վոր նա կարողանա ընդհանուրի սիրելին կոչվել։ Ճիշտ արդպես ել և ասիական յերկրներում ճագարը շատ քիչ ե հայտնի։

Արդեն այդ ցուց ե տալիս, վոր ճագարն իրեւ ընտանի կենդանի մոտ ժամանակվա ծագումն ունի։ Նու այժմս հետզետե տարուծվում ե յերկրագնդի յերեսին և, կարելի յե կարծել, կնվաճի այն։

Սա մի փոքրիկ ուրախ ու քաղցր բնավորության տեր կենդանի յե, հեշտությամբ ընտելանում ե և շատ տեղ ու հատուկ բարդ հոգատարություն չի պահանջում։ Բացի դրանից ճագարն այնպես ազատ ու արագ ել բազմանում ե և տալիս ե այնքան ոգատավետ մթերքներ, վոր հանդիսանում ե շատ գնահատելի հավելում տնտեսության մեջ։ Առանձնապես ճագարը գնահատելի յե փոքր նեղ տարածությամբ և միայն փոքր քանակությամբ բուսական մթերքներ ստանալու հարմարությամբ՝ տնտեսության համար։ Այս հատկությունների շնորհիվ ճագարն ավելի

շատ բազմացնում են քաղաքի բնակիչները, քան գյուղին չաճախ ճադարների բազմացումն ուղղակի սիրողների զբաղմունք ե, այն սիրողների, վորոնք ցանկանում են իրենց մոտ ունենալ վորևե կենդանի ելակ, վորին կարելի լինի խնամել, ու վորը կարողանա զվարճացնել տիրութիւն վայրկաններին:

Ճագարի պատմությունը, բոլոր մյուս ընտանի կենդանիների պատմության հակառակ, համեմատաբար կարճ է, — ճագարը միայն մոտ ժամանակներս ե ընտանի դարձել մարդու կողմից: Հին յեզիպտացիները և հին հույները միանդամայն անծանոթ եյին ճագարներին, քանի վոր Յեվրոպայի արևելքում նրանք բոլորովին չեն ապրել: Զինաստանում, սակայն, ճագարները հայտնի յեն յեղել 500 տարի մեր դարաշրջանից առաջ: Հոռմեական պետության ժամանակներում ճագարներն սկսեցին հայտնի դառնալ և Յեվրոպայում — նրանց մասին գրում են Կատուլն ու Պլինիոսը: Այն ժամանակ վայրենի ճագարներով բնակեցրած և նրանցով հոչակված եր Սպանիան, վորը նախկին հոռմեական գաղութ եղ: Արդ գաղանիկներն ապրում եյին նույնպես և Յեվրոպայի հարավային ու միջին անտառներում և տարածված ելին Միջերկրական ծովի կղզիներում: Ժամանակով նրանք անքան շատ են բազմացել կղզիների վրա, վոր արգելք են հանդիսացել մինչև անգամ հողագործությանը: Այսպես, յերբ վոր կարթագենի անկուսից հետո Բալեարյան կղզիների վրա առաջացան հոռմեական ծաղկյալ գաղութները, — ճագարներն այստեղ զարձան իսկական թշվառություն: Նրանք բոլորովին չնշեցին ցանքսերը: Գաղութաբնակները գանգատ ուղարկեցին հոռմ, Ոգոստոս կայսը զինվորներ ուղարկեց կղզիների ճագարները վոչնչացնելու համար:

Վայրենի ճագարներին ձեռնասուն են դարձել միջին դարերում, բայց հատկապես յերբ և ուր են նրանք առաջին անգամ դարձել ընտանի կենդանիներ, — ստույգ

կերպով հայտնի չե։ Աժենալն հավանականությամբ առաջին անգամ նրանց սկսել են ձեռնասուն դարձնել վանքերում, միշտ հոգ տանելով այն մասին, վոր առանց տապակածի շման ուտիք որերում։

Համենայն դեպս XVII դ. 1637 թվականին Աղդրովանդին, հիմնվելով նախկին դարու հնագույն տարբեր հեղինակների ցուցմունքների վրա, նկարագրում ե ճագարներին տարբեր գույներով, խոսում ե միքանի ցեղերի մասին, վոր նրանք «նապաստակի նման են», և ավելացնում ե, վոր Վալերիանոսը, վախճանված 1558 թվականին, տեսել է վերոնալում ճագարներ, վորքառապատիկ խոցը են յեղել տեղականներից։ Այդ ցույց ե տալիս, վոր այն ժամանակ արդեն գոլություն են ունեցել այդ ընտանի կենդանիների միքանի ցեղերը։

Ճագարների զանազան ցեղեր բուծել են XVIII դարի սկզբներին Անգլիայում, այնպես վոր կան ցուցմունքներ, վոր այնտեղ պատահել են և մինչև անգամ բարձր գնահատվել են, բայց արծաթափայլ մազերով։

Ճագարների ցեղերի մեծամասնությունը, սակայն, բուծվել են դարձալ ել ավելի ուշ, XVIII և XIX դարերում, գլխավորապես Հռվանդիայում, Բելգիայում, Ֆրանսիայում և Անգլիայում։ Նրանց բոլորի նախահայրը մինույն վայրենի ճագարն ե, վորը տարածված ե յեղել Արևմտյան Յեվրոպայում տակավին հռոմայեցիների ժամանակներում և ներկայումս ել պահպանված ե Գերմանիայի և Ֆրանսիայի շատ վայրերում, բայց ուրիշ տեղերում ել նա յենթարկվել ե լրիվ բնաշնչման, այն մնաների համար, վոր նա բերում ե գյուղատնտեսության։

Ճագարաբույծները պնդում են, վոր միքանի ցեղեր առաջացել են իրեն թե ճագարների՝ նապաստակների հետ ունեցած գուգախառնումից, բայց կենդանաբանները բավականին միահամուռ կերպով բացասում են այսպիսի խառնուրդներ կազմակերպվելու հնարավորությունը, վոր

ստացել են ոյեպորիդներ» կոչումը։ Դժբախտաբար այդ հարցը վերջնականապես ու անվերադարձ տակավին պարզաբանված չէ, և դրա շուրջը շարունակ նորինորո վեճեր են հարուցանում։

ՇԾԴԱԲՐՆԵՐԻ ՑԵՎԵՐԸ

Ճագարների ամենախոշոր, ուստի և միենուան ժամանակ ամենաձեռնառ ցեղը—նրանց մսի համար բազմացնելու աեսակետից՝ կարելի յե Քլանդրյանը համարել, վոր բուծվում ե Բելգիայի Ֆլանդրյան գավառում գլխավորապես Գենու քաղաքում։ Այդ քաղաքում մինչև հիմա յել պարապում են «Քլանդրյան հսկաների» բուծմամբ։ Իրոք այդ ճագարները մեծությամբ լինում են մի լավ նապաստակի չափ, և կշիռը հասնում ե 4—6 և մինչև անգամ 9 կիլոգրամմի (22 ֆունտ), Արտաքինից նրանք հաճախ նմանվում են նույնպես գորշ նապաստակին, վորը մեջքին ունենում ե շիկակարմրավուն կինամոնագույն մաղեր։ Այս ցեղի առանձնահատկությունն այն ե, վոր եղերն ունենում են դուրս պրծած փուչիկ։ Ֆլանդրները լինում են և այլ գույներով.— զանազան յերանգի մոխրագույն, դեղին ու սպիտակ կարմիր աչքերով։ Ֆլանդրներ բուծեն ու առանձնապես խոշորներն ստանալին այնքան ել հեշտ ու հասարակ բան չե, — այդպիսիներն ստանալու համար հարկավոր ե լերկարատե ընտրանք։ Ֆլանդրիայի այս ճագարների բուծմամբ հաճախ զբաղվում են հասարակ բանվորները, վորոնց մոտ տանը միշտ մի տեղ կա միքանի վանդակի համար՝ ճագարներ պահելու։

Ճագարներ բազմացնելու գործով արգեն զբաղվում են միքանի սերունդների ընթացքում բանվորների շատ ընտանիքներ ու դրա համար ել այդ գործում ձեռք են բերել մեծ փորձառություն։ Այդ ճագարների եգերը ծնում են հաճախ 8—12 ճագուկներ, և վորպեսզի ուժեղ ու խո-

շոր սերունդ ստացվի, ընտրում են 3—4 ամենակենսունակներին և մայրերին թուլատրում են միայն զբանց կերակրելու, իսկ մյուսներին սպանում են կամ տալիս են այլ մայր-ճագարի կերակրելու: Ֆլանդրների մորթին եժան եղանակն առաջատակում: Նրանք բուծվում են բացառապես միայն մսի չնորհիվ, բայց նրանց միմն ել համի տեսակետից առաջնակարգ չե, սակայն շատ ե:

Շատ որիգինալ ցեղ են հանդիսանում անգլիական կամ ընկած ականջներով ճագարները, կամ խոյեր նրանց ականջները չափազանց յերկար են, այնպես ծանր, վոր կտիս են ընկնում ու քարշ գալիս գետնի յերեսին, յերբ ճագարը նստում է: Ասում են, թե, ականջների այս խիստ զարգացումն առաջ ե յեկել այն բանի չնորհիվ, վոր ճագարներին պահել են շատ բարձր աստիճան տաքության մեջ, վորից, իբրև թե, աճում են ականջները: Այս ցեղն առաջցըրել են ուղղակի նորույթի—կուրյողի—համար և հատուկ գործնական նշանակություն չունի, քանի վոր ալդ ճագարներն ավելի քնքուշ են, քան ֆլանդրյանները, թույլ են ու պահանջում են լավ խնամատարություն: Այսպես ե լինում սովորաբար այն կենդանիների ցեղերի նկատմամբ, վորոնց որդանիզմի վորեն մասը գերաճել ե մինչև լիակատար ամսնեղեղություն, մինչև այն աստիճան, վոր այն խանգարում ե նրան, ինչպես ալդ ճագարների քարշ յեկող ականջները: Սակայն մոխրագույն «խոյերի» և մոխրագույն ֆլանդրների խառնուրդն ունենում ե ավելի մեծ կշիռ, քան ֆլանդրները, և հայտնաբերում ե գնահատելի հատկություն:

Ցեղերի բավականին մեծ քանակություն բուծվում ե վոչ այնքան մսի պատճառով, ինչքան վոր գեղեցիկ մորթու համար, վոր գործադրվում ե մորթեղին մանր ապրանքների համար,—կանացի գլխարկներ, մուֆտաներ, վերարկի և վերնազգեստների յեզրազարդեր, ձեռնոցներ:

Այսպիսի ճագարների մեջ համարլա թե առաջին տեղն

և բոնում յերկնագույն վիշենական ճաղարները, վոր բուծվում են Ավստրիայում։ Ալդ բավական խոշոր ճաղար ե, վոր կշռում ե մինչև $4 - 4\frac{1}{2}$ կգ, ունի գեղեցիկ մոխրագույն-յերկնագույն մազ, ձիշտ այդպիսի յերկնագույն մորթի ունեն Բելգիայում բուծվող ընթերենյան ճաղարները։

Ել ավելի գեղեցիկ մորթի յն հալթալթում արծարավուն ճաղարները։ Նրանց մազը մոխրագույն ե, իսկ մազի տակը սև ե, վորով և արծաթափալլ գունագորման տպագործություն ե ստացվում։ Ուրիշ գեղքերում նրանց բուրգը սև ե, փայլուն վերջիկներով, մի բան, վոր այն նույնպես արծաթափալլ ե դարձնում։

Շատ յուրահատուկ գույն ունեն այսպես կոչվոծ ուստական կամ սպիտակ կղաքիսի ճաղարները (նկ. 12)։ Իսկապես նրանք ամենենին առաջ չեն գալիս Ռուսաստանից, այլ Չինաստանից են ծագում ու բուծվել են Արևմայան Յեվրոպայում։ Ալդ ճաղարի ամբողջ մարմինը զուտ սպիտակ գույն ունի, ծածկված ե հարթ ու խիտ մազերով, բայց քթի վրա մի մեծ բիծ կա, ականջներն ու թաթերի ծալքերը միանգամայն սև են, վոր կազմում



Նկ. 12 Ռուսական կամ սպիտակ կղաքիսի ճաղար։

Ե խիստ հակադրություն, մի հանգամանք, վոր դուրեկան ե միքանի սիրողների համար։ Այս ցեղը հեշտությամբ ե բուծվում, տալիս ե բավականին թանդաղին մորթի և

լավ միս։ Նրա չափսը մեծ չե, և ամբողջ քաշն ընդամենը մոտավորապես 2-3 կիլոգրամմ ե։

Ել ավելի յուրահատուկ գունավորված են թիթեռնիկեագարները, կամ պապիյոն ցեղը։ Նրանց մարմնի սպիտակ ֆոնի վրա ցրված են սև բծեր, վոր ճագարին դարձընում են խայտաբղետ և յերբեմն ել չափազանց դվարալի։

Կան և ճագարների այնպիսի ցեղեր, վորոնք գնահատվում են վոչ այնքան իրենց գունավորմամբ, ինչը անվոր մազի, աղվամազի հատկության շնորհիվ։ Ճագարի ալղպիսի աղվամազ տալիս ե գլխավորապես անգորական ճագարը (նկ. 13), — մի ցեղ, վոր չի ծագում բնավ Ան-



Նկ. 13. Անգորական ճագար։

գորալից (Փոքը Ասիայում), ինչպես վոր կարելի յերկարծել անունից, այլ բուժվում ե Արևմտյան Յեվրոպայում և իր անգորական անունն ել ստացել է նրա համար, վոր մազը նման ե անգորական այծի մազին։ Այս ցեղը ճագարների շատ ավելի հին ցեղերից մեկն ե, քա-

նի վոր հիշատակվում ե Ֆրանսիայում դեռևս 1765 թը-
վականից: Անգրական ճագարների գլխավոր առանձնա-
հատկությունը նրանց յերկար, բարակ ու փափուկ մա-
զըն եւ նրա յերկարությունը յերբեմն հասնում ե 8 սան-
տիմետրի: Դրա համար ել այն արագորեն աճում ե և
հեշտությամբ ել սանրվում, քանի վոր շատ անկայուն ե
պահվում մաշկի մեջ: Սովորաբար ճագարի աղվամազը
ձեռք ե բերվում և սանրելու միջոցով սանրով կամ մե-
տաղլա խոզանակով, յերբեմն ել նրան փետում են մատ-
ներով: Սանրումն այն տեղն ե հասնում, վոր ճագարը
կիսով չափ մերկանում ե, բայց, այնուամենայնիվ, նրա
մազը նորից արագորեն աճում ե: Աղվամազի առաջին
սանրվածքը տեղի յե ունենում արդեն նրա ծնվելուց 7—8
շաբաթ հետո, վոր գեռես բոլորովին փոքրիկ ճագարներ
են, իսկ այնուհետեւ նրանց սանրում են տարին 4 անգամ:
Յօւրաքանչյուր ճագար կարող ե տալ տարեկան մոտա
վորապես 400 դր աղվամազ: Այդ աղվամազը բարձր ե
գնահատվում, — շատ փափուկ ե այն, քնքուշ ու տաք և
կիրառվում ե տանենաքնքուշ ու նուրբ գործվածքային
ապրանքների համար: Անգրական ճագարներն ամենաո-
գատար խնամք են պահանջում: առանձնապես անհրա-
ժեշտ ե նրանց մաքրության մեջ պահելը, վորովիետեւ
կեղաստ պահելու գեպքում նրանց մազը թաղիք ե դառ-
նում, կոպտանում ե և փչանում:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր ճագարների ցե-
ղերը շատ առանձնահատուկ են, չնայած այն հանգա-
մանքին, վոր նրանց ծագումը տեղի յե ունեցել վոչ
շատ առաջ: Շնորհիվ մարդու գործադրած ջանքերի շատ
կարծ ժամանակաշրջանում հաջողեց ձեռք բերել շատ
առանձնահատուկ հատկություններ՝ և նրանց մազի դուր-
ները, ճագարների մարմինի բազմատեսակ չափսեր ու ձե-
վեր: Եթեվ ընդումին մշտապես յերեան են գալիս նո-
րանոր ցեղեր, վորոնք բուծվում են ճագարաբույծների և

սիրողների կողմից յերբեմն ուղղակի գվարճանքի—կու-
րյոզի համար, վորպեսզի ուրիշների առաջ պարծենան-
երենց հնարագիտությամբ:

ԽՆՉՊԵՍ ԵՆ ԲԱՅՄԵՑՆՈՒՄ ՃԾԴԱՐՆԵՐԻՆ

Ճագարներ բազմացնելն առանձին մեծ ծախսեր չե-
պահանջում և վոչ ել առանձին տարածություն,—
կենդանաբուծության բոլոր ճյուղերից այդ ամենահան-
րամատչելին ե, և հնարավոր ե բուծել մինչև անգամ քա-
ղաքալին կրանքում:

Ճագարներով լցված միքանի վանդակ կարելի յե հեշ-
տությամբ տեղավորել վորևե սրահում կամ տանիքի տա-
կին—չերդակում, մանավանդ վոր ճագարները շատ ել չեն
վախենում ցրտից, բայց նրանք տառապում և հիվանդա-
նում են խոնավությունից, և այդ տեսակետից հարկավոր
ե նրանց պահպանել:

Սովորաբար ճագարի վանդակն այնպես ընդարձակ
չի շինվում. 80 քառ. սանտիմետր, ամենաշատը 1 քա-
ռակուսի մետր մակերեսը ճագարի համար բավական եւ
վանդակը կարելի յե շինել վորևե սովորական արկղից
1 քառ. մետր չափսով. Արկղի կողերից մեկը պոկում են
ու նրա փոխարեն զնում յերկաթաթելերով շինած ցան-
կապատի շրջանակ. Արկղի կտփարիչը սղոցվում է 12
սանտիմետրանոց տախտակի կտորներով, և այս փոքրիկ
տախտակներով սարքվում ե վանդակի ներսի հատակը:
Նրանք այնպես են կպցնում միմյանց, վոր նրանց միջև
1 սանտիմետր լայնության արանք ե մնում մեզի հոսան-
քի և աղբը (կղկղանքը) հեռացնելու համար. Շրջանակի
ձեռվ դռնակը շինվում ե այնպես, վոր շրջանակն արտա-
քին գետանից 15 սանտիմետր բարձր լինի, և այդ արան-
քը ծածկվում ե տախտակի կտորով, վորը կարող ե դեպի
ներքեւ բացվել, վորպեսզի հնարավոր լինի մաքրություն
առաջացնել վանդակում: Ինչպես տախտակի կտորը, այն-

պես և գոնակը պահպում են ծղխնիներով (պետք) և սովորական ժամանակ 2 շշանդարով։ Հատակը, նշած տախտակի կտորը և գանդակի ներսի պատերն ոգտավետ կլինի, վոր ձյութվեն, վորպեսզի նրանք մեզից չփշանան։ Վանդակի կափարիչը ծածկում են խավաքարտով, վորպեսզի կենդանին պահպանվի անձրեից, յեթե վանդակը բակն են դնում։ Արտաքին ու ներքին ցանցապատ հատակի միջև շինվում ե խողովակ, այնտեղ թեք դրությամբ ամրացնում են ցինկապատ յերկաթյա թիթեղ ու հարմարեցնում ակոսաձև նեղ փորպաճքը, վորով մեզը հնարավորություն ունենա դուրս հռուելու։

Վանդակի ներսը շինում են ցինկապատ յերկաթյա թիթեղից յերկու բաժանմունքով կերտակրաման — ջրի և կերպարի համար, հաստ յերկաթաթելերից փոքրիկ մսուրներ են սարքում իրուի համար և կլորիկ անցքով մի արկղիկ են դնում, ուր ճագարը ձմռանը ցըտից պատրապարվել կկարողանաւ։ Այս արկղն այնպիսի մեծությամբ են շինում, վոր ճագարը նրա մեջ կարողանա կծկվելով պառկել, և ներսը պատում են թաղիքի կտորով։ Արկղիկի մեջ պատրաստում են խոտ, վոր պետք ե միշտ փոփոխել։ Ամառն այդպիսի վանդակը կարելի յե այգում պահել, ստվերի մեջ իսկ աշնանն ու ձմռանը դնել վորեեշոր սրահում։ Յեթե ճագարները շատ են, այն ժամանակ կարելի յե նրանց վանդակները տեղավորել յերկու հարկում, մեկը մյուսի վրա։

Վանդակը պահելու հանդամանքը ճագարները հեշտությամբ են տանում, բայց, այնուամենայիվ, յեթե հնարավորություն ե լինում, ավելի լավ ե թույլ տալ նրանց ամառը զբունելու և խեղկատակություն անելու վորեեշ ցանկապատած ու պահպանված տեղում, — այսպիսով նրանք շատ ավելի լավ կաճեն ու կրագմանան։ Պետք ե միայն ինկատի ունենալ, վոր ընտանի ճագարները չեն կորցրել իրենց վորջ վորելու բնազդը, վոր հատուկ ե-

վայրենիներին։ Նրանք շատ արագորեն ընդհատակլա անցքեր են շինում ու կարող են հեշտ կերպով վորել ցան կապատի տակը փորփորել ու դուրս գալ։

Եգերին ու վորձերին պետք է պահել առանձին վանդակներում և ընդհանրապես ամենից լավն այն ե, վոր վոչ զուգավորման ժամանակ ճագարը մենակ ե ապրում վանդակում։ Խոշոր ճագարաբուծարաններում հաճախ կառուցվում են բազմաթիվ վանդակներով հատուկ շենքեր ճագարների համար, — ամբողջ շարք ճագարների քաղաքիկներ։

Ճագարներ պահելու ամենակարենը պայմաններից մեկն ե, հարկավ, վանդակում մշտական մաքրություն պահպաննելը։ Այն հարկավոր ե գոնե որական մի անգամ մաքրել ու հոգ տանել այն մասին, վոր ջուրը կանդ չառնի, կերակրի մնացորդներ ու փշրանքներ լինեն, և փոխվի փռվածքը։ Վանդակում լեթե մաքրություն չկա, ճագարները հիվանդանում են, նրանց մազը փշանում ե, նրանք վատ են աճում։

Սննդման տեսակետից ճագարը պահանջվուած չե. նա ուտում ե ամեն տեսակ բուսական կերակուր, բայց, իհարկե, վոչ ամեն կերակուր նրան հավասարապես ոգտակար ե։ Նրա համար ամենաոգտակարը թարմ կերն ե — բանջարանոցային կանաչեղենը, թարմ հնձած խոտը, հատկապես առվույտը, վիկը և այլ ընդեղենն բոււսերը, ամեն տեսակի պտուղները։ Զմեռը կանաչեղեն կերի բացակայության պարագային ճագարներին կարելի յե խոտ տալ, հատկապես առվույտի, ծառերի չոր տերեներ, — լորենու, ծիու, ուռենու, թղկու, հաճարենու, զանազան տեսակի քուսպեր, վարսակ ու գարի, զանազան տեսակ թեփեր։ Շատ բույսեր թունավոր են, և պետք ե հետեւել, վորպեսզի նրանք չընկնեն ճագարի կերի մեջ. այդպիսիներն են՝ ժանտընկույզը (дурман), մոլեխինդը (белена), դեղին մատնետունկը (наперстянка), մորմը (паслен), շան

մաղաղինոսը (петрушка), պարտիզաց աղցանը (латук), պիսակ խնդակոթը (болиголов), թունավոր վորոմը — ռգլուլուլը։ Ճագարների համար վնասակար են նույնապես արինճը (դրեշիխա) և վայրի կակաչը և, վոր հատկապես զարմանալի լե, վնասակար ե և լորին իր կանաչ մասերով։

Ճագարներին կերակրելիս, ինչպես նաև մյուս բոլոր կենդանիներին, պետք ե ուշ դարձնել, վորպեսզի կերակուրը միատեսակ չլինի, այլ փոփոխվի, և վորպեսզի արվի այն ճիշտ վորոշած ժամանակամիջոցներին։ Ամառը ճագարներին սովորաբար կերակրում են որական յերեք անդամ, — առավոտյան, կեսորին և յերեկոյան, իսկ ձմեռ՝ միայն յերկու անդամ — առավոտյան և յերեկոյան։ Կերը պետք ե տեղափորել կերամանում, վորպեսզի չթափվի վանդակի մեջ և չկեղտոտի այն. ավելի լավ ե խռոր դնել մոռորի մեջ, վորպեսզի այն ևս չկեղտոտի և ցրիվցաքան չանի վանդակի մեջ։

Առանձնապես առատ կեր պիտի ստանան այն ճագարները, վորոնք ճագեր են կերակրում։ Ընդհանրապես ճագարներին, յեթե նրանց չեն գերացնում մորթելու համար, հարկավոր չե շատ կերակուր տալ, ալլապես նրանք չաղանում են, և նրանց բազմանալու ընդունակությունն ընկնում ե։ Յեթե ճագարն ստանում ե լավ խառնածու կերակուր, վորի կազմության մեջ մտնում են հյութալի արմատապտուղներ կամ կանաչեղեն կեր, այն ժամանակ նա միանգամայն կարող ե լոլա գնալ առանց խմելու, սակայն չոր կեր տալու դեպքում պետք ե ջուր տալ նրան։ Եդ ճագարը ճագերը ծնելուց մեկ-յերկու որ առաջ ու կերակրելու առաջին շրջանում պետք ե քիչքանակությամբ կաթ ստանա։

Ջագերի լույս աշխարհ գալուց միքանի որ առաջ եղն սկսում ե բուն շինել, նա կրում ե վանդակի վորեն անկյունում խոտ, գարման և ամեն տեսակ փափուկ նյու-

թեր, ինչ վոր ձեռքն ե ընկնում, և, լերբ վոր արդեն կազմվում ե մի ամբողջ շեղ, մեջտեղը խորացնում ե, փոս ե գցում, փետում ե իր կրծքի և փորի «բմբուլ-ները» և դրանցով ծածկում նրանց բունը:

Ճագարի ձագուկները ծնվում են հազիվ ծածկված փոքրիկ վարդագույն աղվամազով և դրա համար ել շատ մըսկան են: Մայրը ծածկում ե նրանց իր փետած աղվամազով ու տաքացնում իր մարմնով: Նրանք առաջին նվագ կույր են լինում ու վախենում են լուսից, դրա համար ել բունը շինում են վորեւ համեստ տեղում: 9—12 որդի վրա վրա ձագուկների աչքերը բացվում են, իսկ 16—18-րդ որդի վրա վրա նրանք արդեն սկսում են գուրս գալ քնից և միքիչ կեր պրպտել: Ցերեքշարթականներն արդեն ուտում են սովորաբար մոր հետ,—նրանց այդ ժամանակ լավ կլինի կերակրել կաթով ու սպիտակ հացով:

1—2 ամսական հասակում ջահել ճագարներին արդեն կարելի յե մորից առնել, և նա ինքն ե արդեն սկսում նրանց քշել, մոնշալ նրանց վրա և մինչև անգամ կծել: Մինչև յերեք ամսական մատղաշ ճագարներին կարելի յե պահել մի ընդհանուր մեծ վանդակում, իսկ չորրորդ ամսին արդեն պետք ե բաժանել իրարից եգերին ու վորձերին: 7 ամսական հասակից նրանք ընդունակ են արդեն բազմանալու:

Ցեթե ճագարները բազմացնում են մորթելու համար, այն ժամանակ 8 ամսականից սկսած 3 կամ 4 ամիս նրանց ուժեղացրած մնունդ են տալիս:

Լավ խնամատարության դեպքում և նորմալ պարմաններում ճագարները շատ արագորեն բազմանում են: Եզր տարեկան ձագեր ե քերում 4—5 անգամ, ընդունին նրանց թիվը լինում ե 6—16, այնպես վոր մեկ զույգից բարեհաջող հանգամանքներում մի տարվա ընթացքում կարելի յե բուժել միքանի տասնյակներ:

ՏԵՇԵՐՆԵՐԻ ԹՈՒԺՄԸՆ ՆՅԵՆԵԿՈՒԹՅՈՒՆԸ.

Արևմտայեվրոպական պետությունները, ուր ճագարները բուծվում են արդեն շատ վաղ ժամանակներից, նրանց բուծումը տնտեսության բավական խոշոր ճյուղի նշանակություն ե ստացել: Ֆրանսիայի և Բելգիայի շատ գավառներում չկա մի գյուղացու տուն, ուր ճագարներ չբազմացնեն, և միջին հաշվով, Ֆրանսիայում 35 միլիոն ճագար ե գուրս բերվում: Նրանք բուծվում են, սակայն, վոչ միայն քաղաքային շուկաների համար, ուր տանում են նույնպես վոչ սակավ քանակությամբ, այլ նրանք կազմում են նաև գյուղացիների համար իրեն սիրած ու մշտական կերակուր, սննդարար ու համեղ կերակուր:

Ֆրանսիական ու բելգիական գյուղերում ճագարների բուծման գործով զբաղվում են գլխավորապես կանալը, և նրանց մոտ ճագարներն ոգտվում են նույնպիսի հոգատարությամբ, ինչպիսիով ընտանի թոշունն ե ոգտըվում: Նրանք խնամում ու կերակրում են ճագարներին. մի մասը գործադրում են իրենց սեփական սեղանի համար, իսկ մնացածը ծախում են գնողներին, վորոնք սպառում են քաղաքի շուկայում:

Մենակ Պարիզում շուկա լե մտնում ամեն շաբաթ 200,000 ճագար, իսկ Լոնդոնում շաբաթական սպառում են կես միլիոն ճագար: Անգլիայում բուծված ճագարները չեն բավարարում, և կենդանի ճագարների հսկայական խմբեր ցամաքից են ստացվում, բացի զբանից Ավստրալիայից ել բերվում են՝ վիթխարի սառեցնող-շոգեկառքերով՝ մորթած ու սառցրած միլիոնավոր ճագարներ:

Գերմանիայում ճագարն ընդարձակորեն տարածվեց միայն ֆրանկ-պրուսական պատերազմից հետո 1870—71 թվականներին, յերբ վոր գերմանական զինվորները ֆրանսիա հասնելով անձամբ, ակնհայտնի կերպով համոզվեցին, թե ճագարն ինչպիսի ոգտակար կենդանի յեւ և թե

ինչպես հեշտ ու հասարակ յեղանակով կարելի յե այն բազմացնել: Յեվ ներկայումս համարյա ամենուրեք միջին ու հարավային Գերմանիայում ճագարներին կարելի յե հանդիպել ինչպես ամենասովորական և ընդարձակութեն տարածված ընտանի կենդանիների: Ճագարի բուժման գործով զբաղվում են վոչ միայն գյուղացիները, այլ նաև բանվորները, վորոնք ապրում են քաղաքներում և բանվորական ռայոններում: Ճագարների նկատմամբ հոգսն այնքան քիչ ե, վոր նրանցով կարելի յե զբաղվել գործի ընթացքում, աշխատանքից ազատ ժամերում: Մը հետ մեկտեղ ճագարի վրա թափած ջանքերի փոխարեն հարյուրապատիկ ե ստացվում և տիրոջը վարձատրում համեղ տապակով ու միքանի կ դմնակի յեկամուտով:

Մեզ մոտ ճագարներ բազմացնելու գործը դեռևս սկզբնական վիճակումն ե: Ճագարները շատ տարածված չեն, — մեր ընդարձակ յերկրի շատ վայրերում ճագարը յերբեք վոչվոքի աշքովն ել չի ընկել: Շատերը, վորոնք ծանոթ են ճագարին, չեն ուտառում նրանց միսը դատարկ ու անմիտ նախապաշարումով, չնայած նրան, վոր ճագարի միսը շատ համեղ ե, փափուկ ու սննդարար: Մինչև անգամ մեզ մոտ քաղաքներումն ել ճագարներ շատ քիչ են պատահում, ե ճագարի մսից պատրաստած կերակուրները քչերին են հալտնի:

Արդեն ժամանակն ե, սակայն, կտրվել նախապաշարումներից ու սկսել լրջորեն զբաղվել այնպիսի ոգտավետ և անպահանձնկոտ մի ընտանի կենդանու բուժման գործով, վորպիսին ճագարն ե: Հատկապես մեզանում, ուր չկա հողի սակավություն, վորպիսին կա յեվրոպական քաղաքներում, բանջարանոցային ու յերկրագործական մթերքների առատության ու եժանության մեջ և գյուղացիական ու բանվորական բնակչության մեծամասնության համար մսեղեն կերակրի սակավության պարագայում: — ճագարը կարող է լինել շատ ոգտավետ ու ձեռնտու կենդանի:

ՀԱՐՑԵՐ, ԹԵՄԱՆԵՐ ՈՒ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վ. Ո Զ Խ Ա. Ի

Դիտեցեք կենդանաբանական թանգարանում կամ կենդան սբանական այդում լեռնային խոյերին, համեմատեցեք նրանց ընտանիների հետ։ Ուշադրություն դարձը զիլսի ձևին, պարանոցի յերկարությանը, վոտների զարգացմանը, նրանց ըրդի հատկությանը։

Ինչու լեռան խոյի պարանոցն ավելի ուժեղ ե զարգացած, քան ընտանուն։

Ընտանի դարձնելիս դարձալ ինչպիսի փոփոխություններ են կրել վոչխարներն արտաքինից և ինչու։

Ացելեցեք վորեե տնտեսություն, ուր զանազան ցեղերի վոչխարներ են բուծում։ Նկարագրեցեք տեսած վոչխարների ցեղերը և համեմատեցեք նրանց միմյանց հետ։

Ինչով են զանազանվում վոչխարների մսացու ցեղերը նրանցից, վորոնք բուրդ ստանալու համար են, առանձնապես նրբագեղմն ցեղերից (մերինուներ, նեղբետափ, ուամբուլիե, ինֆանտադո)։

Ուշադրությամբ դիտեցեք վոչխարի բուրդը։ Վոչխարից քաշած բոլոր բուրդը կոչվում ե գեղմն։ Բըդի մազերը, միքանիսը միասին միացած, նյոււսեր են կազմում։ Նըտնք վոլորած են, և, ինչքան շատ ե 1 սանտիմետրի չափով վոլորածների թիվը, այնքան ավելի բարձը ե գնահատվում բրդի տեսակը (բարձը տեսակների բուրդը մի սանտիմետր հաստության վրա ունենում ե 12 վոլորտ, իսկ ստորին տեսակներինը՝ 5—6)։ Միքանի հյուսեր միանում են միմյանց հետ ու կազմում են բրդի

փնջեր, վոր կոչվում են տապելներն եւ կապվում են իրար հետ ու կազմում են գեղմը:

Դիտեցեք, թե ինչպես են միմյանց հետ կապվում մազիկները, հլուսերը և շտապելները: Ի՞նչպիսի դեր ե խաղում վոչխարի կաշվից արտաթորված յուղը:

Դիտեցեք վոչխարի բուրդը մանրադիտակով: Համեմատեցեք սովորական վոչխարի և մերինոսի կամ այլ ազնվացը ցեղի վոչխարի բրդերը միմյանց հետ: Ի՞նչն ե նրանց միջև յեղած տարբերությունը:

Իմացեք ու նկարագրեցեք, թե ինչպես են պահվում և կերակրվում վոչխարները:

Ի՞նչպիսի արագությամբ ե աճում հասակը: Առկերն ու վոչխարներն ի՞նչ ծանրություն, կշիռ են ձեռք բերում:

Ի՞նչ կշիռ ունի խոլից ու վոչխարից հանած դեղմը:

Ի՞նչքան ե կղուում նորածին գառնուկը, ի՞նչպես և տեղի ունենում նրա աճումն ամառվան ու ձմեռվան յեղանակներին:

Դիտեցեք, թե ինչպես են խուզում վոչխարները: Ի՞նչու համար ռամբուլյե և այլ դարսերով կաշի ունեցող ցեղերի վոչխարներ խուզելն ավելի դժվար ե:

Մանոթացեք, յեթե հնարավորություն կստեղծվի, վոչխարի բրդի հետադա վերամշակմանը և նրանից մանվածքներ ու դործվածքներ պատրաստելուն:

Ա Յ Ծ

Դիտեցեք կենդանաբանական թանգարանում կամ կենդանաբանական ալգումիեռնային այծերին, համեմատեցեք նրանց ընտանիների հետ: Ուշադրություն դարձրեք գլխի և պարանոցի ձեռքին, վուաների զարգացմանը, մազի հատկությանը:

Ենտանի դարձնելիս ի՞նչպիսի փոփոխություններ են

կըել ալծերը, և այդ փոխոխութիւններն ի՞նչնվ են արտահայտված:

Այծերը իրենց լեռնալին ծագումը հիշեցնող ի՞նչպիսի ընազդներ ու սովորութիւններ են պահպանել:

Համեմատեցե՛ք ալծերի և վոչխարների վոտներն ու սմբակները: Ի՞նչնվ են բացատրվում նրանց տարբերությունները:

Ուշադրությամբ դիտեցե՛ք այծի մազը: Ի՞նչո՞վ ենա տարբերվում վոչխարի բրդից: Ի՞նչո՞ւ համար նա գեղմ չի կազմում, ի՞նչպես վոչխարը: Ի՞նչ բան ե այծի դժուիկը:

Դիտեցե՛ք ալծի մազը մանրագիտակով ու համեմատեցե՛ք այն վոչխարի բրդի հետ: Ի՞նչն ե տարբերությունը:

Նկարագրեցե՛ք, թե տնտեսության մեջ ի՞նչպես են պահվում ալծերը: Ի՞նչպիսի խնամք կա նրանց նկատմամբ: Ի՞նչպիսի յե կերը:

Վորոշեցե՛ք նորածին այծիկի կշիռը և նրա աճան ընթացքում հետևեցեք կշռի փոփոխմանը, շաբաթը մի անգամ կշւելով:

Գծագրեցե՛ք կոր գծով կշռի աճումը:

Ծանօթացե՛ք այծի մազի վերամշակմանը: Ի՞նչո՞վ ե տարբերվում վոչխարի բրդի վերամշակումից:

Խ Ո Զ

Դիտեցե՛ք կենդանաբանական թանգարանում վայրենի վարագին: Համեմատեցե՛ք նրա արտաքինն ու կազմը: Վածքը ընտանի խողերի հետ: Ուշադրություն դարձրե՛ք գլխի կազմվածքին, իրանի ձևին, վոտների կազմվածքին:

Ի՞նչ ոգուոս ունի վոտներին չորս սմբակ ունենալը: Համեմատեցե՛ք վարագի և խողի մազե ծածկոցը վոչխարի բրդի և այծի մազերի հետ: Վորեե բանով նրանց մա-

զեւ ծածկոցի հատկությունը կապված է արդյոք բնակագլուխի հետ:

Այցելեցե՞ք խոզաբուծական խոշոր տնտեսությունները, ծանոթացե՞ք այն բանին, թե այնտեղ ինչպես և պահպատճեցը, ինչպես և ինչով են նրանց կերակրում: Նկարագրեցե՞ք ալդպիսի տնտեսությունը:

Համեմատեցե՞ք սովորական խոզերն «ազնվացրածների» հետ, լորկշերների կամ բերկշերների հետ: Ինչո՞վ և արտահայտվում նրանց միջև յեղած տարբերությունը:

Հարցուփորձ արեք, թե ինչպիսի արագությամբ են կերակրվում թե մեկը և թե մլուսները, ինչքան միտ ու ճարպ են տալիս, ինչքան կեր են գործածում:

Կշռեցե՞ք նորածին խոճկորին: Հետևեցե՞ք նրա աճմանը, շաբաթը մի անգամ կշռելով: Գծագրեցե՞ք կորդիտը նրա աճումը:

Համեմատեցե՞ք խոզերի զանազան ցեղերի աճման արագությունը և պարզեցե՞ք, թե այս տեսակետից նրանց միջև զանազանությունն կա:

Ընտանի խոզերի վարքին հետևելով, պարզեցեք, թե ինչպիսի բնազդներ են պահպանվել վայրենի նախնիներից, և ինչպիսիները կորցրել են ընտանեցման ժամանակ:

Ճ Ա Գ Ա Ր

Համեմատեցե՞ք միմյանց հետ ճագաբների զանազան տեստկ ցեղերը և պարզեցե՞ք, թե ինչով են նրանք զանազանվում միմյանցից մարմնի, գլխի, ականջների, մազերի գույնի, մազերի հատկության, կշռի տեսակետներից:

Վորոշեցե՞ք, թե ձեր տեսածներից վոր ցեղն և հանդիսանում ամենաոգտակարը բազմացնելու համար և առհասարակ վորեւ նպատակի համար:

Մոտիկից դիտեցե՞ք ճագաբը և համեմատեցե՞ք նրան գորշ նապաստակի և ալպիան նապաստակի հետ: Ինչո՞վ և նա զանազանվում և այդ տեսակներից վորին ենա մոտիկ:


Ի՞նչպիսի բնագդներ եւ պահպանել ճագարն իր վայ-
րենի նախնիքներից:

Այցելեցնք խոշոր ճագարաբուծարանները և ծանո-
թացնք այստեղ բուծված ճագարների ցեղերին:

Հարցուփորձի միջոցով պարզեցնք այդ ցեղերի
արժանիքներն ու պակասությունները: Նկարագրեցնք,
թե ինչպես են պահպում ճագարները, ինչպես են նրանց
խնամում, ինչպես և ինչով են նրանց կերակրում: Ի՞նչ-
պիսի արագությամբ եւ ավելանում նրանց կշիռը: Ի՞նչ-
պիսի արագությամբ են բեղմավորվում:

Փորձեցնք ինքներդ փորձեր կատարել վորեե ցեղի
ճագարների նկատմամբ՝ զանազան կերակուրներ ուտեցնե-
լով ու հետևեցե՛ք, թե կերակուրն ինչպես եւ ազդում
նրանց աճման վրա: Կշռեցնք միքանի մատղաշ ճագար-
ներ ու տեղալորեցնք նրանցից յուրաքանչյուրին առան-
ձին վանդակում: Տվե՛ք ամեն մեկին ճիշտ վորոշած քա-
նակությամբ կերակուր և ապա լավ նայեցնք, վոր վոչ
մի կողմնակի անձնավորություն նրանց չկերակրի: Ճա-
գարներից վոմանց կերակրեցնք վորեե մեկ վորոշ կերա-
կրով, կշռելով. որինակ՝ վարսակով, թեփով կամ խոտով,
ուրիշներին տվե՛ք խառն կերակուր (ցորեն, կարտոֆիլ,
արմատապտղներ, թեփեր, խոտ): Թե սրանց և թե
մյուսներին որամեծ կերակրելուց առաջ կշռեցնք ու
զրի առե՛ք կշիռը: Գծագրեցնք աճումը յուրաքանչյուրի
համար առանձին կոր գծով: Կարճ ժամանակից հետո
նկատելի կլինի, վոր այն ճագարները, վորոնք ստանում
ենին միատեսակ, թեպետև առատ կերակուր, կորցնում
են իրենց քաշը: Ենք այդ պարզ կերեա աճման կոր
գծերի վրա, դադարեցրե՛ք փորձը և կերակրեցնք առա-
ջին ճագարներին ել խառն կերակրով:





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

I. Պոչխար

Վոչխարի ծագումն ու պատմությունը	3
Վայրենի և ընտանի վոչխարը	10
Վոչխարների ցեղերը	16
Ինչպես են բազմացնում վոչխարը	25
Վոչխարների հիվանդությունը	28

II. Այծ

Այծի ծագումն ու պատմությունը	32
Վայրենի և ընտանի ալծը	38
Այծերի ցեղերը	40
Այծի դժուկը	42


III. Խոզ

Խոզի ծագումն ու պատմությունը	45
Վայրենի և ընտանի խոզը	50
Խոզերի ցեղերը	53
Ինչպես են բազմացնում խոզերին	57
Խոզերի հիվանդությունները	61

IV. Ճագար

Ճագարի ծագումն ու պատմությունը	66
Ճագարների ցեղերը	69
Ինչպես են բազմացնում ճագարներին	74
Ճագարների բուծման նշանակությունը	79

Հարցեր, թեմաներ և առաջադրություններ 81



[son]

ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0008031

A II
19012